AZG NEW 1.QXD 6/8/2009 10:50 PM Page 1

Ազգ
Azg
9 ՅՈՒՆԻՍ 2009 ԵՐԵՔՇԱԲԹԻ 105 (4241)
ISSN: 1829-1651

## Ըստ թուրքերի, հայաստանյան եւ կիպրական բանկերի միջոցով գումարներ են փոխանցվում PKK-ին

Ըստ «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի, Հայաստանի եւ Կիպրոսի բանկերի միջոցով տարեկան 1 միլիարդ եվրո է փոխանցվում Հյուսիսային Իրաք՝ Քրդստանի բանվորական կուսակցությանը (PKK): Այս մասին հաղորդում է թուրքական «Սթար» թերթը՝ վկայակոչելով Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (MIT) տվյալները: Ըստ թուրքական հետախուզության, Քուրդ գործարարների եւ գործատուների միջազգային միությունը, որի կենտրոնակայանը գտնվում է Գերմանիայում, Եվրոպայում իրեն անդամակցող 279 կազմակերպություններից հավաքած տարեկան մոտ 1 միլիարդ եվրոն ուղարկում է PKK-ին: Իսկ այդ փոխանցումները, ըստ MIT-ի, իրականացվում են Հայաստանի եւ Կիպրոսի բանկերի միջոցով: Ինչպես կարելի է կռահել, հերթական անգամ գործ ունենք թուրքական ապատեղեկատվության հետ. Հայաստանի եւ Կիպրոսի բանկերը վերջինն են, որ կարող էին նման գործարքների գնալ, երբ գոյություն ունեն արաբական աշխարհի տարաբնույթ դրամատները:

# Բանակցությունների հիմք քննարկման նոր առարկա՞

*ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հայտարարությունը թերեւս նորություն է, մինչդեռ կողմերը լռում են*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումներն այնքան հաճախակի են դարձել, որ դադարել են առանձնակի հետաքրքրություն առաջացնել, հասկապես եթե հաշվի առնենք, որ լավատեսությունն ու կանխատեսումներն ամեն անգամ ինչ-որ ակնկալիքների տեղիք են տալիս, մինչդեռ որեւէ առաջընթացի մասին կողմերը ոչ խոսում են, ոչ էլ ենթադրել տալիս:

Ընդհակառակը, ավելի հաճախակի են դառնում բազմիցս հնչած մեղադրանքները, թե այս կամ այն կողմը ապակառուցողական մոտեցում է ցուցաբերում, թե բանակցություններում մեկ հայկական, մեկ ադրբեջանական կողմը հրաժարվում է նախնական համաձայնեցված դիրքորոշումներից, կամ փոխզիջումների մասին հայտարարությունների կողքին կրկին լսվում են հաստատուն ու որեւէ կերպ փոփոխության չենթարկվող սկզբունքներին հավատարիմ մնալու հավաստումներ:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հերթական հանդիպումը տեղի ունեցավ հունիսի 4-ին Սանկտ Պետերբուրգում: Կրկին ոչ մի տեղեկություն, սովորականի նման անգամ չլսվեցին որեւէ կողմի դժգոհությունները, որպիսիք հատկապես սիրում է յուրաքանչյուր հանդիպումից առաջ ու հետո տարածել պաշտոնական Բաքուն՝ հոգնեցնելու աստիճան կրկնված մեղադրանքների ցանկով հայկական կողմի հասցեին:

*Տես էջ 3*

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ

# Սաակաշվիլին գալիս է Հայաստան՝ քննարկելու նաեւ Վրաստանով հայկական բեռների տարանցման թանկությո՞ւնը

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին պատրաստվում է այցելել Հայաստան: Վրացական լրատվամիջոցների փոխանցմամբ, երեկ Թբիլիսիում տեղի ունեցած Հայաստանի եւ Վրաստանի արտգործնախարարների հանդիպմանը քննարկվել է նաեւ այդ այցի նախապատրաստման ընթացքը:

Դեռեւս կիրակի՝ հունիսի 7-ին Վրաստան աշխատանքային այցով մեկնած Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը** Թբիլիսիում իր գործընկերոջ հետ քննարկել է հայ-վրացական հարաբերություններին առնչվող հարցեր: Ինչպես հայտարարել է Վրաստանի արտգործնախարար **Գրիգոլ Վաշաձեն**, Վրաստանի նախագահի աշխատանքային այցը Հայաստան նախատեսվում է հունիսի 24-25-ին:

Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարի այցի ընթացքում չէր կարող անդրադարձ չլինել հայ-վրացական տնտեսական հարաբերություններին՝ Վրաստանով հայկական բեռների տարանցման համատեքստում: Մինչ Էդվարդ Նալբանդյանը կուղեւորվեր Թբիլիսի, Երեւանում Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանը** հայտարարեց, որ Վրաստանը օգտվում է Հայաստանի հանդեպ տարանցման իր մենաշնորհային վիճակից:

Մասնավորապես, վարչապետ Սարգսյանը նշել էր, որ հայ-թուրքական սահմանի բացման պարագայում Հայաստանը կփոքրացնի Վրաստանից տարանցման առումով մենաշնորհային կախվածությունը, քանի որ Հայաստանի արտաքին բեռնաշրջանառության մոտ 2/3-ը ներկա դրությամբ անցնում է Վրաստանով: Վարչապետն ընդգծել էր, որ տվյալ դեպքում Վրաստանից Հայաստանի կախվածությունը բացարձակ է եւ հարեւան երկիրն օգտվում է դրանից՝ Հայաստանի համար սահմանելով տարանցման ծախսերի բարձր սանդղակ: Վարչապետը մանրամասնել էր, որ աշխարհի որեւէ կետից մինչեւ վրացական Փոթիի կամ Բաթումի նավահանգիստներ բեռների փոխադրումը կրկնակի էժան է նստում, քան Փոթիից ու Բաթումից Հայաստան:

Այս հարցին անդրադառնալով արդեն Թբիլիսիում՝ Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարն ընդգծել է, որ վրացական տարածքով բեռնափոխադրումների առնչությամբ շատ հարցեր բարձրացնում են գործարարները՝ որեւէ տեղից մինչեւ Փոթի, այդուհետեւ Հայաստան բեռները հասցնելու համար փոխադրումների բարձր ծախսերի առումով: Նույն տրամաբանությամբ եւ Նալբանդյանի խոսքերով, գործարարները կարող են եւ փնտրում են այլընտրանքային տրանսպորտային ուղիներ՝ բեռնափոխադրումները առավել շահավետ տարբերակով կազմակերպելու համար:

Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեն, իր հերթին, հայտարարել է, թե տվյալ հարցն իր իրավասությունից դուրս է, միեւնույն ժամանակ հավաստելով, որ խնդիրը կուսումնասիրվի իրավասու եւ համապատասխան կառույցներում: «Մենք հետաքննության նման մի բան կանցկացնենք, կուսումնասիրենք այդ հարցը եւ կխոսենք: Ոչ մի անլուծելի, սկանդալային ու խնդրահարույց բան այս հարցում չկա», հայտարարել է վրաց արտգործնախարարը:

Ա. Հ.

# «Քաղաքական լուրջ ենթատեքստ ունեցող» հարկային փաթեթի բուռն քննարկումներ



ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ազգային ժողովում երեկ շարունակվեց հարկային փոփոխությունների փաթեթի քննարկումը: Ելույթ ունեցող պատգամավորները միաձայն դեմ էին արտահայտվում այս նախագծին:

Այս փաթեթով, 4 մլրդ դրամից ավելի շրջանառություն ունեցող գործարարների ընկերություններում կառավարությունը ծրագրում է հարկային տեսուչ ներդնել: Այսպիսով, կառավարությունը լրացուցիչ հսկողության մեխանիզմներ է ներդնում, որպեսզի գործարարները լավագույնս կատարեն իրենց հարկային պարտավորությունները:

«Սա քաղաքական լուրջ ենթատեքստ ունեցող օրինագիծ է, եւ բերողը պետք է ասի, որ մինչեւ հիմա սխալվել ենք: Պարզվեց, որ այն բոլոր մեխանիզմները, որոնք ամրագրվել են կառավարության ծրագրի մեջ, այժմ չեն աշխատում: Այսինքն՝ կառավարությունը հարկային քաղաքականության մեջ ձախողվել է», հայտարարեց ԱԺ ՀՅԴ խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանը**: Նրա խոսքով, այս օրինագծերի ընդունմամբ ներկրողը չի տուժի, փոխարենը տեղական արտադրողները կընկնեն հարվածի տակ:

*Տես էջ 2*

## Փաստահավաք խումբը լուծարվեց

Նախագահի նստավայրից հաղորդում են, որ Սերժ Սարգսյանը հունիսի 6-ին կարգադրություն է ստորագրել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի հոկտեմբերի 23-ի «Փորձագետների փաստահավաք խմբի ստեղծման եւ նրա գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին:

## Վարդան Օսկանյանը դասախոսություններ կտա Նյու Յորքում ու Բոստոնում

Ըստ «**Ազգին**» հասած տեղեկությունների, նախկին արտգործնախարար եւ այժմ «Սիվիլիթաս» հիմնարկության նախագահ Վարդան Օսկանյանը հունիսի 17-ին եւ 18-ին՝ հաջորդաբար Բոստոնում եւ Նյու Յորքում դասախոսություններ կկարդա: Առաջին բանախոսության թեման, Բենտլի համալսարանի «Լա Կավա» կենտրոնում, լինելու է պետական գործչի հետադարձ հայացքը Հայաստանի արտաքին քաղաքականությանը, իսկ երկրորդը, Ֆորդհեմի իրավաբանական դպրոցում, վերլուծելու է հայ-թուրքական հարաբերությունների խութերն ու կարելիությունները:

Մինչ այդ, այսօր, Վ. Օսկանյանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի հետ Երեւանի «Գոլդըն թյուլիպ» հյուրանոցի «Ռոսսինի» սրահում հրապարակային քննարկում կունենա Հայաստանում ընտրելու իրավունքի վիճակի մասին:

## ՀԱԿ-ը դիմելու է Վարչական դատարան

Հայ ազգային կոնգրեսը դիմելու է Վարչական դատարան՝ Երեւանի ավագանու ընտրություններում իրենց արձանագրած խախտումները քննարկելու եւ համապատասխան որոշում կայացնելու համար: Այս մասին տեղեկացրեց ՀԱԿ-ի ներկայացուցիչ **Ավետիս Ավագյանը**՝ միաժամանակ ավելացնելով, որ քանի դեռ ընթացքի մեջ կլինի դատական գործընթացը, իրենց համար ընտրությունները ավարտված չեն: «Հնարավոր բոլոր օրինական միջոցները պետք է օգտագործենք՝ մեր պահանջներին հասնելու համար», ընդգծեց նա: Ըստ Ա. Ավագյանի, մինչեւ դատական գործընթացը չավարտվի, իրենք ավագանու մանդատներից հրաժարվելու դիմում չեն ներկայացնելու: ՀԱԿ ներկայացուցիչը նաեւ չցանկացավ մեկնաբանել «Ժառանգության» այն հայտարարությունը, թե ՀԱԿ-ը դեռեւս կայացած քաղաքական ուժ չէ, հաղորդում է «Արմենպրեսը»:

# Լիբանանի խորհրդարանական ընտրություններն ավարտվեցին «Մարտի 14»-ի ուժերի հաղթանակով

*Դաշնակցության երեք թեկնածուներ պարտություն կրեցին*

Հակառակ կանխատեսումների, կիրակի օրը, հունիսի 7-ին Լիբանանում կայացած խորհրդարանական ընտրություններում մեծ անակնկալներ տեղի ունեցան, մանավանդ հայկական գետնի վրա: ՀՅԴաշնակցությունը, որ մեծ հույսեր էր կապել Բեյրութի 1-ին ընտրաշրջանում հաղթանակի հասնելու, այդ պատճառով Լիբանան փոխադրելով մի քանի հազար լիբանանահայերի, այդ թվում Հայաստանից, պարտություն կրեց, սակայն առաջնահերթ դեր խաղաց Մեթնում (Լեռնալիբանան) ընդդիմադիր ուժերի (գլխավորությամբ գեներալ Միշել Աունի) հաղթանակի համար այդ ընտրատարածքում:

Ռամկավար ազատական կուսակցության թեկնածու Ժան Օղասափյանը եւ վերջինիս պատկանած «Մարտի 14» համախմբավորման մյուս թեկնածու Սերժ Թուրսարգիսյանը (հայ կաթողիկե), Նեյլե Թվեյնիի, Նեդիմ Ջեմալի, Միշել Ֆարաոնի հետ՝ Սաադ Հարիրիի գլխավորած բլոկի հաղթանակը տոնեցին սուր եւ հավասար պայքարից հետո: Բեքաայի հովտում գտնվող Զահլե հայաշատ քաղաքում, ավելի քան 26.000 ձայների առավելությամբ հաղթանակ տարավ ՀԲԸՄիության Բեյրութի Լեւոն Կ. Նազարյան վարժարանի երիտասարդ տնօրեն, ռամկավար հայտնի ընտանիքի անդամ Շանթ Ջինջինյանը՝ նախկին պատգամավոր, դաշնակցականամետ Ժակ Կասարջիի դեմ (24 000 ձայն):

Լիբանանի ընդդիմադիրները ճանաչեցին իրենց պարտությունը, ցանկություն հայտնելով համագործակցել երկրի խորհրդարանում եւ կազմվելիք նոր կառավարությունում: Վերջնական արդյունքները պաշտոնապես հայտարարելուց առաջ, ըստ ընտրական հաշվարկի, 68 երեսփոխանական աթոռներ շահել են Սաադ Հարիրիի ղեկավարած «Մարտի 14»-ի ուժերը, 58 աթոռներ՝ ընդդիմադիր «Բարենորոգչական» հոսանքը:

Այսօր երեկոյան կհայտարարվեն ընտրությունների վերջնական արդյունքները:

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՖՅԱՆ
Բեյրութ

*(Տե՛ս նաեւ էջ 5)*

AZG NEW 2.QXD 6/8/2009 10:12 PM Page 1



# Րաֆֆի Հովհաննիսյանը եռախոսության է կոչում ՀՅԴ-ին, ՀԱԿ-ին եւ «Ժառանգությանը»

«Այս ընտրությունների նախապատրաստումը, անցկացումը եւ հատկապես արդյունքները նախապես որոշված էին, կապ չունեին մեր ժողովրդի` սահմանադրական հիմք ունեցող ազատ իրավունքի հետ: Ընդհանուր առմամբ` համազգային տապալում է, Երեւանի քաղաքացին եւ հայ ժողովուրդը դեմ-հանդիման են եկել հերթական, փաստացի, դեֆակտո իրավիճակի հետ: Մենք տապալել ենք եւ դե յուրե լուծում չենք գտել մեր խնդիրներին ու մարտահրավերներին, եւ պետք չէ պատրանք տածել, որ Եվրոպայի խորհուրդը, դիտորդը, արտաշխարհը մեզ փարոս կամ ուղեցույց պետք է լինեն: Մենք հերթական հնարավորություն ունեինք եւ չիրացրինք այդ հնարավորությունը: Մնում է, որ հաջորդ ընտրություններին մենք կարողանանք իրական այլընտրանք եւ ժողովրդի մասնակցություն ապահովել», այսպես խոսեց «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ **Րաֆֆի Հովհաննիսյանը** երեկ, Ազգային ժողովի միջանցքում պատասխանելով լրագրողների հարցերին:

Նրա կարծիքով` բոլորի եւ հատկապես ընդդիմադիր դաշտի ուժերի համար հերթական ներհայեցողության ժամանակն է եկել, յուրաքանչյուր ուժ իր համար նախ պետք է որոշի` որտե՞ղ է ինքը սխալվել:

Նշելով, որ արտահայտածն իր անձնական կարծիքն է եւ ոչ թե «Ժառանգության» պաշտոնական տեսակետը, որի ժամանակը եւս կգա, Ր. Հովհաննիսյանը նկատեց, թե հիմա փոքրիկ, առանձին դրոշներ բարձրացնելու պահը չէ. «Մի դաշտից գալիս է ճիշտ եւ շինիչ առաջարկը` ազգային ընդդիմադիր դաշտում անելիքներ ունենք: Բայց «Ժառանգությունը» լինելով փոքրակազմ, այո, սխալական, քիչ բան չի արել վերջին տարիների ընթացքում ընդդիմադիր դաշտում ազգային դիրքեր պահելու եւ ամրապնդելու համար: Մյուս բեւեռում ուզում են քաղաքացիական իրավունքների` Սահմանադրական դատարանի դրոշը բարձրացնել, այսինքն` ամեն մեկն իր փոքրիկ դրոշն է բարձրացնում: Պետք է այդ հատվածական դրոշները վայր դնենք, դրոշը վերադարձնենք ժողովրդին, փրկենք մեր քաղաքացիական եւ ազգային դրոշը: Ամեն մեկն իր սխալը պետք է վերլուծի, եւ ես, օրինակի համար, որպես քաղաքացի կողմ կլինեի, որ ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն եւ «Ժառանգությունը» խորհրդակցությունների շարք սկսեին` յուրաքանչյուրն իր սխալից սկսելով եւ փորձելով նոր բանաձեւում, համագործակցության նոր դաշտ ձեւավորել»:

Զարուհի Փոստանջյանի այն միտքը, թե ՀԱԿ-ը կազմված է հնացած մարդկանցից, Հովհաննիսյանը չերկրորդեց` ամեն մեկն իր տեսակետն ունենալու վրա հղում անելով եւ ասելով, թե իր կարծիքով` թե՛ ՀԱԿ-ը, թե՛ ՀՅԴ-ն կայացած ուժեր են եւ արժե ու հարկ է, որ հաղթահարեն սեփական փոքրիկ դրոշակների պահը եւ ստեղծեն ավելի լայն ընդդիմադիր խորհրդակցության ավանդույթ:

ՀԱԿ-ի` մանդատ չվերցնելու որոշումը չմեկնաբանեց, բայց անձամբ հակված էր մասնակցային քաղաքականության:

**«Ազգի»** դիտարկմանը, թե բաժանարար գծերն ավելի շատ են այդ երեք ուժերի միջեւ, այսպիսի հայեցողական պատասխան տվեց. «Կարող է լրագրողությունը դա է տեսնում. ձեր քննադատությունը հաղթահարելու համար հիմա պահն է, որ յուրաքանչյուրը դուրս գա իր սեփական փոքրությունից, եւ որ` ՀՅԴ-ն, ՀԱԿ-ը, եւ «Ժառանգությունը սկսեն խորհրդակցության դաշտ, որի նպատակը ոչ թե սեփական դրոշը բարձրացնելն է, այլ նորմալ ընտրական իշխանափոխության համար ընդդիմադիր դաշտի նախապատրաստումը եւ միասնականացման խնդրի լուծումը: Գոնե պետք է մեկնարկի այդ եռախոսություն հրամայականը...»:

ԵԽԽՎ-ի հունիսվերջյան նստաշրջանում Հայաստանի հարցի հետ կապված էլ նկատեց, թե բյուրեղանում է հարցը եւ գալիս հետեւյալին. մինչեւ հաջորդ նիստը եթե լինի համաներում, ապա Հայաստանը կխուսափի հնարավոր պատժամիջոցներից, եւ անգամ կարող է Հայաստանի հարցը օրակարգից դուրս գալ: Բայց միաժամանակ տեղեկացրեց, որ ԵԽԽՎ-ում շրջանառության մեջ է մի բանաձեւի նախագիծ, որտեղ կոչ է արվում, որ ԵԽԽՎ լիագումար նիստում, հանձնաժողովներում համապատասխան քննարկումից հետո, քննարկեն, թե որն է ԵԽԽՎ-ի տիրույթում «քաղաքական բանտարկյալ» սահմանումը, եւ եթե ընթացք ստանա այս բանաձեւը, այնտեղ մի վտանգավոր դրույթ է լինելու. քանի դեռ ԵԽԽՎ-ն իր վերջնական տեսակետը չի հայտնել քաղաքական բանտարկյալներին վերաբերող սահմանման վերաբերյալ, Հայաստանի, Ադրբեջանի, Մոլդովայի եւ այլ նման երկրների վերաբերյալ հատուկ զեկուցող չի կարող լինել: Սա ցույց է տալիս, որ ի վերջո Եվրոխորհուրդը փորձում է Հայաստանին եւ Ադրբեջանին նույն հարթության վրա դնել, որը չի բխում Հայաստանի շահերից, եզրակացրեց Ր. Հովհաննիսյանը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏ

# Գագիկ Բեգլարյանը դարձավ առաջին ընտրված քաղաքապետը

**«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 2009-ի մայիսի 7-ի որոշման համաձայն` Երեւանի ավագանու նիստը գումարվեց հունիսի 8-ին: Երեկ, ըստ սահմանված կարգի, գրանցվեցին ՀՀԿ 35 եւ ԲՀԿ 17 անդամները: Նշենք, որ ԲՀԿ-ի ցուցակը գլխավորող Հարություն Քուշկյանը եւ եւս մի քանիսը հրաժարվել են ավագանու անդամությունից, նրանց փոխարինել են կուսակցության ցուցակի մյուս անդամները: Ինչպես տեղեկացրեց քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը, «Երեւանի ավագանու ընտրություններում հաղթած մյուս ուժը` ՀԱԿ-ը, չէր ներկայացել»:**

**Անդրանիկ նիստը վարելու իրավունքը (ըստ օրենքի) վերապահվել է ավագանու անդամ Աստղիկ Գեւորգյանին, որն էլ շնորհավորելով իր գործընկերներին, նշել է. «Պատմական օր է այսօր մեզ համար: Կարծում եմ, որ արտահայտած կլինեմ ավագանու բոլոր անդամների կամքը` ասելով, որ ամբողջ ավագանին պատրաստ է նվիրվելու Երեւանի առջեւ ծառացած խնդիրների կարգավորմանը: Ինձ համար մեծ պատիվ է վարել Երեւանի առաջին ավագանու առաջին նիստը»: Երեւանի ավագանու ընտրությունների արդյունքով ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին ստացած ՀՀԿ համամասնական ցուցակի առաջին հորիզոնականը զբաղեցնող Գագիկ Բեգլարյանը դարձավ Երեւանի առաջին ընտրված քաղաքապետը, իսկ մինչ այժմ եղած` 53-րդը:**




**Պրն Բեգլարյանը, նիստը վարողի հայտարարությունից հետո, ծափերի ուղեկցությամբ զբաղեցրեց իր տեղը նախագահությունում: Այնուհետեւ հաստատվեց ավագանու ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը` նախագահ ընտրվեց Սուրեն Ներսիսյանը (ՀՀԿ), քարտուղար` Նատալյա Լափաուրին (ԲՀԿ) եւ երկու անդամներ` Մանվել Ավետիսյանը (ՀՀԿ) եւ Արման Վարդանյանը (ԲՀԿ):**

**«Ազգը» Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ, ավագանու անդամ տիկին Աստղիկ Գեւորգյանից փորձեց պարզել, թե ինչո՞վ է տարբերվելու ավագանու գործունեությունը մինչեւ այժմ եղած քաղաքապետների գործունեությունից: «Ցավում եմ, որ կորցրել ենք փաստորեն 13 տեղ, բոլորի ծանրաբեռնվածությունը կրկնակի կլինի, ինչպես ասաց քաղաքապետը, բայց մենք լի ենք վճռականությամբ նվիրված աշխատելու, ուժերի լրիվ ներդրումով, եւ հուսով եմ, որ ավագանու անդամների մեջ կլինի համերաշխություն, որովհետեւ առանց միաբանության, առանց համերաշխության, առանց բարի կամքի ոչ մի աշխատանք չենք կարող կատարել: Իսկ ինչ վերաբերում է ձեր հարցին, չէի ասի, թե կտրուկ փոփոխություն կլինի, քանզի նախկին քաղաքապետները բավականին աշխատանք արել են ու դրանք ակնհայտ են: Ավագանու անդամներս ձգտելու ենք անել այն, ինչը չեն հասցրել անել նախկին աշխատողները եւ շարունակելու ենք սկիզբ առած գործերը»:**

**Օրենքի համաձայն, Երեւանի առաջին ընտրված քաղաքապետի երդման արարողությունը տեղի կունենա հունիսի 11-ին, ժամը 11-ին` ավագանու նստավայրում` Երեւանի քաղաքապետարանում: Իսկ ավագանու առաջին նստաշրջանը կգումարվի հունիսի 23-ին, ժամը 11-ին:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Հրայր Կարապետյանն ու Նաիրա Զոհրաբյանը` ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահներ

**Ազգային ժողովի երկու մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները թափուր էին: Եվրոինտեգրման հանձնաժողովի նախագահ, ԲՀԿ-ական Ավետ Ադոնցը նշանակվել էր Բելգիայում ՀՀ դեսպան: Այդ պաշտոնում ԲՀԿ խորհրդարանական խմբակցության քարտուղար Արամ Սաֆարյանն առաջարկեց Նաիրա Զոհրաբյանի թեկնածությունը, որը բավական մանրամասն ներկայացրեց իր պատկերացումները Հայաստանի` եվրոպական ինտեգրացիայի եւ ապագա աշխատանքի վերաբերյալ:**

**ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանն էլ ներկայացրեց ԱԺ նախկին փոխնախագահ Հրայր Կարապետյանի թեկնածությունը` ավելի վաղ Արթուր Աղաբեկյանի հրաժարականից հետո ազատ մնացած պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար: Այս երկու թեկնածությունները դրական եռանգով քննարկվել էին ՀՀԿ խմբակցությունում եւ հավանության արժանացել, ինչի մասին էլ հայտնեց ՀՀԿ խմբակցության քարտուղար Էդվարդ Շարմազանովը: Երկուսն էլ փակ գաղտնի քվեարկությամբ դարձան նախագահներ (հանձնաժողովներ):**

**Իսկ Ադոնցի ազատած պատգամավորական մանդատը տրվելու է ԲՀԿ համամասնական ցուցակից Վաչե Խուրշուդյանին:** Մ. Խ.

# «Քաղաքական լուրջ ենթատեքստ ունեցող» ...

*1-ին էջից*

**Խոշոր գործարարները, ըստ Հովհաննիսյանի, լինելու են քաղաքական պատանդ եւ դա վառ արտահայտվելու է հատկապես ընտրությունների ժամանակ: Նա նշեց նաեւ, որ իրենց խմբակցությունը դեմ է քվեարկելու փաթեթին:**

**ԲՀԿ խմբակցության պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը նշեց, որ վտանգավոր է առաջնորդվել հանցագործի կանխավարկածով եւ մտածել, որ բոլոր գործարարները հանցագործ են. «Այդ դեպքում ես կարող եմ հակընդդեմ հարց առաջադրել, իսկ ի՞նչ երաշխիքներ կարող ենք ունենալ, որ Պետական եկամուտների կոմիտեում աշխատում են բացարձակապես հրեշտակներ, եւ այդ կանոնրան հրեշտակների կանոնրա է»:**

**«Փոփոխությունները, որոնք լրամշակված տարբերակով բերվել են, կարելի է նշել, որ անընդունելի են: Եթե ցանկանում ենք իրականացնել նորմալ վարչարարություն, ստվերը բերել հարկային դաշտ, ապա մի ամբողջ շղթա պետք է առողջացվի` մաքսային եւ հարկային դաշտը, արտադրությունը, վաճառքը: Այս շղթան ամբողջությամբ պետք է նորմալ աշխատի: Ես առաջին անգամ տեսա, որ խորհրդարանում նմանատիպ քննարկումներ են տեղի ունենում: Եվ ձեր ցավը, բնականաբար, հասկանալի է: Եթե դուք ընդհանրապես ընտրություններին չխառնվեք, գումար չտաք, որպեսզի ընտրակաշառք բաժանեն, ընդհանրապես խորհրդարան չգաք` ընդամենը ձեր համակրող կուսակցություններին օժանդակեք, այդ դեպքում ձեր բիզնեսը, ձեր սեփականությունը պաշտպանված կլինի», իր կարծիքը հայտնեց «Ժառանգությունից **Արմեն Մարտիրոսյանը**:**

**Անկախ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը իր ելույթը հիմնականում կառուցեց քաղաքական շեշտադրումների վրա, քանի որ ներկայացված օրենսդրական նախաձեռնության տնտեսագիտական նրբերանգների մասին պատգամավորները ելույթներ ունեցան. «Խորհրդարանին տեղյակ պահեմ, որ ՀՀ սահմանադրության համաձայն, կառավարությունը մեկ նստաշրջանի ընթացքում երկու անգամ որոշակի օրինագծի վերաբերյալ կարող է դնել իր վստահության հարցը: Այսինքն, եթե ՀՀ կառավարության համար այդ օրենսդրական նախաձեռնության ընդունումը հույժ կարեւոր է, ապա կառավարությունը օրենսդրական նախաձեռնության ընդունման հետ կապված կարող է դնել իր վստահության հարցը, եւ եթե պառլամենտը չընդունի այդ օրինագիծը, ապա կառավարությունը, սահմանադրության համաձայն, պետք է հրաժարական տա: Իմ տպավորությամբ` պառլամենտը քննարկում է ՀՀ օրենքը` այսպես կոչված մատնիչների կամ գործ տվողների մասին, իմ տպավորությունը դա է: Տվյալ պարագայում ես կարծում եմ, որ պետք է ստվերային տնտեսության դեմ պայքարել, բայց այս մեթոդը բացարձակապես կապ չունի ազատ շուկայական տնտեսության զարգացման հետ: Որոշ տվյալներով, ՀՀ տնտեսության 70 տոկոսը գտնվում է 44 ընտանիքների ձեռքին: Վիճակագրության տվյալներով, 325 խոշոր հարկատուները տիրապետելով ամբողջ տնտեսությանը` պետական բյուջեին մուծում են ընդամենը 40 տոկոս, իսկ 60 տոկոսը վճարում է մանր եւ միջին բիզնեսը: Այսինքն` ակնհայտ է, որ խոշոր գործարարները դուրս են վերահսկողությունից եւ ստվերային տնտեսությունը մեծ ծավալի է հասնում»:**

# Երեւանում խմելու ջրի սակագինը դարձավ 181 դրամ

Խմելու ջրի սակագինը հուլիսի 8-ից կբարձրանա 8,2 դրամով եւ կկազմի 181 դրամ 1 խմ համար` ներկայիս գործող 172,8 դրամ սակագնի փոխարեն: Երեկ այս որոշումն ընդունեց հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, քննարկելով «Երեւան ջուր» ընկերության ներկայացրած հայտը: Այդ սակագինը ներառում է ջրամատակարարման արժեքը` 153,8 դրամ, ջրահեռացման արժեքը` 12,6 դրամ եւ կեղտաջրերի մաքրման արժեքը` 14,4 դրամ:

«Երեւան ջուրը» առաջարկել էր խմելու ջրի սակագինը բարձրացնել մինչեւ 189,9 դրամ: Այդ նպատակով ընկերությունը ներկայացրել էր իր հաշվարկներն ու սակագների փոփոխության հիմքերը: Դրանք են բաժանորդների ջրօգտագործման ծավալների կրճատումը, գնաճը, էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությունը եւ դոլար-դրամ փոխարժեքը: Սակայն, հանձնաժողովի աշխատակազմի մոնիտորինգի արդյունքներով, հիմնավորված է համարվել սակագնի 8,2 դրամով բարձրացումը: Այսպիսով, հաջորդ ամսվանից Երեւանի եւ շրջակա բնակավայրերի բնակիչները խմելու ջրի համար պետք է վճարեն 181 դրամ 1 խմ-ի դիմաց: Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 4.QXD 6/8/2009 8:37 PM Page 1



# «Փորձել են ստուգել ոչ թե գիտելիք, այլ գլուխկոտրուկներ լուծելու հմտություն»

***Հունիսի 5-ին Երեւանում կայացած հայոց լեզվի եւ գրականության միասնական քննություններին մասնակցած շրջանավարտների մի խումբ ծնողներ, շուրջ 50 ստորագրություններով, դիմել են մեր թերթին՝ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված բաց նամակը տպագրելու խնդրանքով, ինչն անում ենք, միաժամանակ մեր կողմից ավելացնելով, որ իրո՛ք հայոց լեզվի եւ գրականության թեստը ոչ միայն բարդ էր, այլեւ որոշապես շփոթեցնող, իսկ որոշ հարցեր՝ բոլորովին ավելորդ, երբեմն անգամ բանասերների համար անլուծելի:***

**Մեծարգո նախագահ**

Ձեզ ենք դիմում որպես Հայաստանի Հանրապետության պետականության եւ երկրի ապագայի համար մտահոգ քաղաքացիներ, իրենց զավակների հոգեկան եւ ֆիզիկական առողջության, նրանց գոյության, ներկայի ու ապագայի համար ծնողական զգացմունքի ու խղճի, Աստծո եւ Հայոց պետության սահմանադրության առջեւ պատասխանատու հայ ծնող, հայոց լեզվի, գրականության, մշակույթի կենդանի կրող ու փոխանցող հայ մարդ:

Ելնելով մեր անմիջական փորձից եւ վերլուծելով քննության անցկացման կարգը, թեստի բովանդակությունը, ստացված արդյունքների արտառոց պատկերը, քննությանը մասնակցած շրջանավարտների հոգեկան եւ ֆիզիկական վիճակն ու դրանց հետեւանքները՝ երկրի եւ քաղաքացիների համար այս ծանր ժամանակահատվածում, հայտնում ենք, որ 2009-ի հունիսի 5-ին կայացած հայոց լեզվի եւ գրականության միասնական քննությունները եւ դրանց արդյունքները չափազանց տագնապահարույց են: Մենք այդ ողջ գործընթացը Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի համար համարում ենք հանցավոր եւ գնահատում՝ որպես

1. ձախողում,
2. հարված՝ երկրի ու ժողովրդի թիկունքից,
3. մեր երեխաների՝ երկրի ու իրենց ապագայի հանդեպ տածած հավատի վրա տեղացած աղետաբեր կարկուտ:

Մեծարգո նախագահ

Նախ ցանկանում ենք հիշեցնել, որ այս տարվա շրջանավարտները ծնվել են հայ ժողովրդի նորագույն պատմության ամենադաժան տարում՝ 1992-ին: Այդ իրողությունը՝ նրանց կրած զրկանքները, թերասնումը, ցրտի ու խավարի մեջ աչք բացելը, ի՞նչ հետք է թողել այս երեխաների հոգեֆիզիկական վիճակի վրա՝ հրաշալի գիտի յուրաքանչյուր ծնող եւ կարող է մեկնաբանել ամեն մի բժիշկ: Սակայն չգիտես ինչու եւ ովքեր որոշեցին այդ երեխաներին եւս մեկ անգամ պատժել, «սթափեցնել», փորձության ենթարկել՝ այս անգամ մեծ կյանք մտնելու առիթով:

Կարծում ենք, որ մեր երեխաների պատրաստվածության, գիտելիքների, ունակությունների համեմատ քննության արդյունքները չափազանց ցածր են, հիասթափեցնող ու հուսալքող. գնահատականների հիմնական մասը տատանվում է 8-13-ի սահմաններում, շատ են անբավարար արդյունքները:

Ծնողների, երեխաների, ուսուցիչների, վստահ ենք՝ նաեւ պետության համար վնասակար է երեւույթի, հատկապես, բարոյական կողմը:

Առկա են՝ ֆինանսական հնարավորություններ, որոշակի դիրք կամ պաշտոն ունեցողների երեխաների, այս համատեքստում չափազանց բարձր գնահատականներ ստանալու դեպքեր, որոնք հերքում են քննության հետ կապված ինֆորմացիայի գաղտնիությունը եւ ընդհակառակը՝ հաստատվում են թեստի պատասխանների առք ու վաճառքի վերաբերյալ ազգաբնակչության մեջ շրջանառվող լուրերն ու տեղեկությունները: Կան դեպքեր, երբ անհամեմատ ցածր ունակությունների եւ գիտելիքների մակարդակ ունեցող որոշ ունեւորների երեխաներ վերին պայծառատեսությամբ լուսավորված՝ հանկարծ ստացել են 19-20 միավոր գնահատականներ, երբ կրթության նախարարը հերքում է ինֆորմացիայի արտահոսքի մասին լուրերը: Մեզ մնում է կասկածել վերին ուժերի ազնվությանը եւ հուսալ, որ գաղտնիության ապահովման նպատակով հարկատուների վճարած գումարներով կատարված ծախսերն ապարդյուն դարձնող մեղավորները կպատժվեն օրենքի ողջ խստությամբ:

Գտնում ենք, որ համապատասխան մարմինները պետք է հետազոտեն, լուսաբանեն այս երեւույթը եւ, որ կարեւորն է, կանխվեն նման դրսեւորումները հաջորդ քննությունների ընթացքում:

Կարծում ենք, որ քննության արդյունքները ցածր են հետեւյալ պատճառներով.

որոշ քննական կենտրոններում ստեղծվել է անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, երեխաների հանդեպ անբարյացակամ վերաբերմունք, տարրական կարիքները հոգալու հետ կապված անհարմարություններ՝ իրենց բոլոր հնարավոր հետեւանքներով,

այլ կենտրոններում հնարավորություն են ունեցել միմյանց օգնելու, կամ խանգարելու, ապակողմնորոշելու, չեն գործել խոստացված խլացուցիչները,

թեստը ուսումնասիրելով՝ տպավորություն է ստեղծվում, որ այն պատրաստել են ոչ թե սրտացավ ու բանիմաց պրոֆեսիոնալներ, այլ շրջանավարտներին, քննական գործընթացին, ընդհանրապես երկրին վնաս տալու մտադրությամբ գրազ եկած մասնագետներ:

Որպեսզի մեր տպավորությունը չհնչի որպես մերկապարանոց հայտարարություն՝ հիմնավորենք.

- նախ, թեստը իր բնույթով, բովանդակությամբ ու բարդությամբ չի համապատասխանում ԳԹԿ-ի հրատարակած եւ տրամադրած «Հայոց լեզու եւ գրականություն: Պետական, ավարտական եւ միասնական քննության ուղեցույցին»,
- որակ են կազմում անհասկանալի, դժվարըմբռնելի, խճողված հարցադրումներն ու պահանջները,
- առկա են հայ գրականության ճանաչողության, ընկալման ու գիտելիքների հետ առնչություն չունեցող ինքնանպատակ հարցեր,
- հարցադրումներ՝ գրականության դասընթացի ծրագրում չընդգրկված ստեղծագործություններից,
- հայոց լեզվի քերականությանը վերաբերող հարցերը բարդ են իրենց կառուցվածքով եւ ժամանակատար, հաճախ արդիականության պահանջներին, հայեցի կրթության ու դաստիարակության վերջնանպատակներին աններդաշնակ,
- փորձել են ստուգել ո՛չ թե գիտելիք, այլ գլուխկոտրուկներ լուծելու հմտություն:

Դիտարկումների այս շարքը կարելի է շարունակել եւ հիմնավորել, սակայն հարկ ենք համարում սրանով սահմանափակվել եւ հավաստել, որ միանգամայն հնարավոր է լուրջ աշխատանքներ իրականացնել կրթական բարեփոխումները ծառայեցնելու ոչ թե ի վնաս, այլ ի շահ երկրի ու ժողովրդի:

Մենք համոզված ենք, որ Հայաստանում կրթական համակարգը եւ նրա շուրջը ձեւավորված հոգեբանական մթնոլորտը տագնապալի են՝ տարբեր պատճառներով, որոնցից մեկն այն է, որ համաշխարհային գործընթացներին ինտեգրվելու ճանապարհին մենք կորցնում ենք մեր լավագույն ավանդույթներն ու իրական արժեքները: Ռացիոնալ եւ կառուցողական սկզբունքներով առաջնորդվելու փոխարեն մեր մշակույթն ու կրթությունը վերաձեւում ենք ու մտցնում օտար շրջանակների մեջ:

Կարծում ենք, Ձեր անմիջական վերահսկողությամբ՝ նորանշանակ նախարարը լրջորեն կզբաղվի ԳԹԿ-ի գործունեության արդյունավետության, ազնվության, օբյեկտիվության ու նպատակաուղղվածության խնդիրներով: Նրա տխրահռչակ գրահրատարակչական գործունեության անհեթեթությունն ու վնասակար դերը կբացահայտվի ու հիմնովին կվերափոխվի: Ամեն տարի երեխաների ճակատագիրը խեղող, հոգեկան աշխարհը խառնող, ծնողների դժվարությամբ վաստակվող գումարներն ու ժամանակը շռայլորեն պարտակող, երեխաների միտքն ու հիշողությունը աղավաղող՝ սխալներով, թյուրիմացություններով ու անհեթեթություններով լի տասնյակ գրքերի ու ժողովածուների փոխարեն կստեղծվեն հակիրճ ու օգտակար, նպատակասլաց մեկ շտեմարան, մեկ ուղեցույց, մասնագետների ընտրության ու պատրաստման, ռացիոնալ ու պրագմատիկ բուհական համակարգ:

Խոսքը վերաբերում է նաեւ անորակ դպրոցական դասագրքերին, դպրոցներում տիրող կրթական-դաստիարակչական անբավարար մակարդակին ու բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտին:

Մի՞թե հնարավոր չէ դպրոցում տալ այնպիսի գիտելիքներ, որ հիմնովին վերանա դասախոսների մոտ պարապելու՝ հիմնականում մեխանիկորեն վարժվելու, համընդհանուր դարձած, ընդհատակյա մասնավոր ինստիտուտը, որի ընդլայնման ու տարածման միտումներն ու տրամաբանությունը քայքայում են կրթական համակարգը: Ավելին, դառնալով գիտելիքի ու կրթության հանդեպ անտարբերության հիմնաքարերից մեկը:

Իրականում, հասարակության համար միջնակարգ կրթության բովանդակությունը հիմնականում սահմանափակվում է 1-2 տարի դասախոսի մոտ պարապելով, որը կտրված է դաստիարակությունից եւ հիմնարար ու մնայուն գիտելիք չի կարող լինել: Արդյունքում երեւույթը պարարտացնող երկիրն ու հասարակությունն ունի այն, ինչ ունի: Առավել քան համոզված ենք, որ բարեփոխումներ պետք է իրականացնել այս ուղղությամբ:

Վստահ ենք, որ ազգային դպրոցի արդիականացման ու առողջացման դեպքում միանգամայն իրատեսական է, որ յուրաքանչյուր երեխա դպրոցում ստացած իր գիտելիքներով, հանգիստ, առանց հոգեկան ցնցումների ու ավելորդ ֆինանսական ծախսերի, կարող է իր նախասիրություններին համապատասխան կրթություն ստանալ ու դառնալ իր գործի վարպետը:

Ահա այս ուղղությամբ է, որ համատեղ պիտի մտածենք ու գործենք:

Մեծարգո նախագահ

Մեկ-երկու օրից մեր երեխաները հանձնելու են նոր քննություններ: Նկատի առնելով այդ առարկաների թեստերի անհիմն բարդության աստիճանը եւս, ու գիտակցելով, որ քննությունների ընթացակարգում եւ թեստերում փոփոխություն կատարելն այլեւս անհնար է, վստահ ենք, որ Ձեր նախաձեռնությամբ կգտնվեն խնդրի լուծման արդյունավետ մեխանիզմներ եւ մեր երեխաներին հնարավորություն կտրվի ինքնահաստատվելու, մասնագիտություն ձեռք բերելու եւ արժանապատիվ ապրելու ու աշխատելու իրե՛նց հայրենիքում:

Մենք վստահ ենք, որ մեր բողոքի արձագանքը չի ուշանա, եւ Ձեր նախաձեռնությամբ համապատասխան մարմինները ժամ առաջ կզբաղվեն այս չափազանց կարեւոր հարցի լուծմամբ:

Կանխավ շնորհակալություն,
հարգանքով՝

**Երեւանի 2008-2009 թթ. մի խումբ**
**շրջանավարտների ծնողներ:**
**Առդիր՝ երկու էջ ծնողների**
**ստորագրություններով:**
**Հեռ. 091-72-17-67**
**Երեւան, 06.06.2009 թ.**

# Հայերենի թեստը՝ կրկնակի սթրեսի պատճառ

Նախորդ ուսումնական տարվա ընթացքում ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունների չինովնիկներն անվերջ խոսում էին միասնական քննության առավելությունների մասին, նշելով, որ շրջանավարտն առանձին-առանձին չհանձնելով ավարտական ու ընդունելության քննությունները, կխուսափի 2 անգամ սթրեսի ենթարկվելուց: Հունիսի 5-ին կայացած միասնական քննության հայերենի թեստին ծանոթանալուց հետո պարզ դարձավ, որ նրանք որոշել էին միանգամից կրկնակի սթրես պատճառել մեր շրջանավարտներին: Մինչ հիմա էլ անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ անլույս տարիներին (1992-93 թթ.) ծնված ու ճգնաժամի տարում դպրոցն ավարտած հենց այս սերունդը դարձավ հոգեկան նման ցնցման թիրախ:

Մեզանում, ավա՜ղ, քննությունը երբեք էլ տոն չի եղել: Բայց ոչ մեկի՝ չինովնիկ լինի, թե թեստեր կազմող, իրավունք չի տրված այն սուգի վերածելու: Հայերենի քննությունից դուրս եկող յուրաքանչյուր երկրորդն արցունքներ ուներ աչքերին: Բոլորն էին անակնկալի եկել: Նման բարդության առաջադրանքի չէին սպասում ո՛չ ուսուցիչները, ո՛չ կրկնուսույցները, ո՛չ էլ իրենք՝ աշակերտները: Ու պարզ չէ այս քայլի իրական նպատակը. ապացուցե՞լ, որ դպրոցներն այսօր թույլ են եւ չեն ապահովում իմացական պատշաճ մակարդակ: Բայց ի՞նչ մեղք ունեն դրանում աշակերտները: Մյուս կողմից, մեզանում որքան իջնում է կրթական մակարդակը, անհասկանալի տրամաբանությամբ բարդանում են քննական հարցաշարերը:

Ամենախոհեմը կլիներ, թեկուզ ուշացումով, այդ միասնական քննության հարցաշարը ենթարկել փորձագիտական վերլուծության պարզելու համար՝ այն նախատեսված էր բուհական ընդունելության քննությա՞ն, թե՞ համալսարանի բանասիրական ֆակուլտետն ավարտելու համար: Ավելի քան վստահ եմ, որ նույնիսկ դասատուներն ու դասախոսները չպիտի կարողանային դրանից բարձր միավորներ ստանալ (այդտեղից հետեւություն, թե ովքե՞ր էին ստացել նման միավորներ): Բացի վիճահարույց կետերից, կային նաեւ դպրոցական ծրագրից դուրս հարցեր: Այսպես, վերոհիշյալ նախարարության Գնահատման եւ թեստավորման կենտրոնի կազմած «Հայոց լեզու եւ հայ գրականություն» ուղեցույցում (Երեւան, 2008 թ.) Չարենցի «Խմբապետ Շավարշը» պոեմը բացակայում է ծրագրային ստեղծագործությունների ցանկից: Մինչդեռ այս տարվա թեստում կա նման հարց:

Ո՞վ է պատասխան տալու նման անփութության համար, որը կարող է ճակատագրական դառնալ հազարավոր դիմորդների համար: Միաժամանակ առկախ է մնում նշյալ ուղեցույցի պարունակյալ եւ տարվա ընթացքում տարբեր հեղինակների թողարկած թեստային առաջադրանքների հարցը. ինչի՞ համար էին դրանք տպագրվում եւ մեծ եկամուտ ապահովում դրանց հեղինակներին, եթե իրենց բարդության աստիճանով հեռու էին քննական օրինակից:

Այս եւ ուրիշ շատ հարցեր ամենեւին էլ զուտ ուսումնական կամ քննական ոլորտից չեն: Տեղի ունեցածը նախ ական էր կրթության եւ գիտության նորանշանակ նախարարի դեմ, ապա՝ հայրենի իշխանությունների հանդեպ լրացուցիչ անվստահություն սերմանելու մի ավելորդ փորձ: Հարյուրավոր, եթե ոչ՝ հազարավոր ծնողների անունից առաջարկում եմ չեղյալ հայտարարել հայոց լեզու եւ հայ գրականություն միասնական քննության արդյունքները կամ, ծայրահեղ դեպքում, վերանայել գնահատման կարգը:

**ՎԱՐԴԱՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**
**ծնող**

# Լիբանանում հաղթել է կառավարող դաշինքը

## Աննախադեպ ընտրախախտումներ

Լիբանանում հունիսի 6-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների նախնական արդյունքներն արդեն վկայում են, որ հաջողության են հասել «Մարտի 14» կառավարող դաշինքի ուժերը: Դրանց գլխավոր մրցակիցը Իրանի եւ Սիրիայի աջակցությունը վայելող «Մարտի 8» դաշինքն էր:

Այսպիսով, Լիբանանի խորհրդարանում արեւմտամետ ուժերին հաջողվել է պահպանել առավելությունը: Կառավարող դաշինքը նոր խորհրդարանում կունենա առնվազն 69 տեղ: Ենթադրվում է, որ կստանա 71 տեղ: Տեղերի ընդհանուր թիվը 128 է: Արմատական «Հզբոլլահ» շարժումը կունենա առնվազն 52 տեղ: Այս արդյունքը համարվում է անսպասելի, քանի որ նախապես անցկացված հարցումներով կանխատեսվել էր «Հզբոլլահի» հաղթանակը:

Ռոյթեր գործակալությունը մեջբերում է հրապարակված տեղեկություններ, որոնց համաձայն ընտրություններին մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 3 260 000 անձանց 55 տոկոսը:

«Ալ Մուստակբալ» կուսակցության եւ «Մարտի 14» դաշինքի առաջնորդ Սաադ Հարիրին երկրի բոլոր քաղաքական ուժերին կոչ է արել, անկախ ընտրությունների արդյունքներից, համատեղ գործել հանուն Լիբանանի տնտեսական վերածնության: Նրա խոսքերով, ընտրություններում «հաղթել է ժողովրդավարությունը»:

«Մարտի 8» դաշինքը, այդ թվում՝ «Հզբոլլահի» առաջնորդները, առայժմ ձեռնպահ է մնում մեկնաբանություններից, սպասելով վերջնական արդյունքների հրապարակմանը: Իսրայելական աղբյուրները չեն բացառում, որ «Հզբոլլահը» կփորձի վիճարկել «Մարտի 14»-ի հաղթանակը: Արեւմտամետ ուժերի հաղթանակը, անշուշտ, ձեռնտու է Իսրայելին:

Թե՛ «Մարտի 14»-ը եւ թե՛ «Մարտի 8»-ը դժգոհելու պատճառներ ունեն: Բանն այն, որ ընտրություններին հետեւում էին միջազգային դիտորդների 3 տարբեր խմբեր: Դրանցից մեկը գլխավորում էր ԱՄՆ նախկին նախագահ Ջիմի Քարտերը: Բոլոր դիտորդները նշում են, որ եղել են աննախադեպ ընտրախախտումներ: Տեղի են ունեցել ընտրողների քվեների «գնումներ» մինչեւ 2000 դոլարով: Զանազան կուսակցություններ վճարել են քվեարկելու նպատակով Լիբանան եկած հազարավոր տարագիրների ճանապարհածախսը, ինչի մասին «**Ազգ**»-ը գրել էր նախորդ համարում:



# Լավատեսությունն ու փոխըմբռնումը խրախուսելու մտադրությամբ

Չնայած Բարաք Օբաման իդեալիստական մղումներով Սպիտակ տուն մտավ, այդուհանդերձ Մերձավոր Արեւելքի կնճռոտ տարաձայնությունները հաղթահարելու քաղաքականության մեջ նա որդեգրեց ռեալիստական մոտեցումը, մի կողմ թողնելով «ամերիկյան ոճի ժողովրդավարության» տարածումը եւ պարտադրումը ողջ աշխարհին, գրում է Թոբի Հարնդենը անգլիական «Դեյլի թելեգրաֆ» թերթում:

Հասկանալի է, որ նա միեւնույն վայրն ընտրեց ելույթ ունենալու, ինչն իրենից առաջ՝ 2005 թվին պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսն էր ընտրել եւ հորդորել արաբական երկրներին արդար ընտրություններ անցկացնել, ազատ արձակել քաղբանտարկյալներին, խոսքի ազատություն ընձեռել եւ ընդարձակել կանանց իրավունքները:

Օբաման բոլորովին այլ տոն տալով իր ելույթին եւ անտեսելով Հոսնի Մուբարաքի 28 երկար տարիների նախագահությունը, նշեց, որ եկել է ոչ թե պարտադրելու, այլ խրախուսելու փոխըմբռնումը: Կահիրեն ընտրելու իր որոշման քննադատողներին պատասխանել է, որ Մուբարաքը «Մ. Նահանգների անսասան դաշնակիցն է մնացել ամենատարբեր առումներով»: Նա արտաքին քաղաքականության ասպարեզում գովասանքով է արտահայտվել ինչպես նրա, որպես «տարածաշրջանում կայունությունը պահպանողի», այնպես էլ Մ. Նահանգների նախկին ռեալիստ առաջնորդներից՝ ավագ Ջորջ Բուշի, Բրենտ Սկոուքրոֆթի եւ Հենրի Քիսինջերի մասին: Նա վստահություն է հայտնել, որ իր անհատականությունն ու բազմամշակութային անցյալը (երկար տարիներ ապրել է Ինդոնեզիայում՝ ամենաշատ մահմեդական բնակչություն ունեցող երկրում) խթան կհանդիսանան խաղաղության եւ լավատեսության: Օբաման ելույթից առաջ լրագրողներին հայտնել է, որ չի պատրաստվում ներողություն խնդրել իր նախորդի՝ Բուշի կամ Մերձավոր Արեւելքում անցյալի այլ գործողությունների համար: BBC-ի թղթակցին նա ասել է. «Մենք ցանկանում ենք երկխոսություն սկսել: Գիտեք, որ երկկողմանի թյուրըմբռնումներ կան Մ. Նահանգների եւ արաբական աշխարհի միջեւ: Կարծում եմ՝ մեզ կհաջողվի վերադառնալ լուրջ բանակցությունների ժամանակաշրջանին: Տարածաշրջանի կայունությունը կարեւոր է բոլորի՝ պաղեստինցիների, հրեաների եւ մյուսների համար»:

Իր հերթին Ռիչարդ Սպենսերն ավելացնում է, որ շրջագայությանը վերջին րոպեին Սաուդյան Արաբիան ընդգրկելով՝ Օբաման ցանկացել է չոտարել «հին ընկերներին», քանի որ նպատակը Սիրիային եւ Իրանին եւս ներգրավելն է քաղաքականության մեջ: Սաուդյան Արաբիայում նա քննարկել է նաեւ նավթի գների ու համաշխարհային տնտեսությանն առնչվող հարցեր:

Հ. Ծ.

# ԿԺԴՀ-ի 25-ամյա նոր առաջնորդը

Անցյալ տարվա վերջերին ուղեղի կաթված ստացած ԿԺԴՀ-ի 67-ամյա առաջնորդ Կիմ Յոնգ Իլը պաշտոնապես հայտարարել է, որ Շվեյցարիայում ուսում ստացած իր երրորդ՝ ամենակրտսեր որդին կհաջորդի իրեն, Շանհայից տեղեկացնում է «Դեյլի թելեգրաֆի» թղթակից Մալկոլմ Մուրը:

«Արքայազն» Կիմ Յոնգ Ունը 25 տարեկան է եւ ըստ «գահին» մոտիկ աղբյուրների, շատ նման է հորը: Նա Շվեյցարիայում սովորել է անգլերեն, գերմաներեն եւ ֆրանսերեն, եւ Սեուլի Սեյոնգ ինստիտուտի մասնագետներից Չոնգ Սեոնգ Չանգի բնութագրմամբ՝ «ուժեղ եւ անողորմ առաջնորդ» լինելու բոլոր հատկությունները ունի: Իր տարեդարձի (հունիսի 8-ի) նախօրյակին եղած այս հայտարարությունը վերջակետ է դնում նույն պաշտոնի համար իր ավագ եղբայրների միջեւ մղված պայքարին:

Ամենամեծ եղբայրը՝ Կիմ Յոնգ Նամը բացարկ էր հայտարարել այն բանից հետո, երբ փորձել էր 2001 թվին կեղծ անձնագրով մուտք գործել ճապոնական «Դիսնեյլենդ», իսկ միջնեկը՝ Կիմ Յոնգ Չոլը իր չափազանց «աղջկական» բնավորության համար «հարմար թեկնածու չէր կարող նկատվել»:

Բանակին եւ գերագույն խորհրդի ներկայացուցիչներին հրահանգվել է հավատարմություն ցուցաբերել նոր առաջնորդին եւ իշխանության փոխանցումը հարթ ու խաղաղ ճանապարհով անցկացնել: Փենյանի հեղինակավոր պաշտոնյաներից՝ Օ Կուք Ռյոլը (Ազգային պաշտպանության խորհրդի նախագահ) եւ Չոե Իկ Գյուն (քարոզչության գլխավոր ղեկավար) պաշտպանում են երիտասարդի նշանակումը: Ավելին, Կիմ Յոնգ Իլի հիվանդությունից հետո երկրի ներկայիս «գործող առաջնորդ» Յանգ Սոնգ Տաեկը, որն ամուսնացած է Կիմի քրոջ հետ, արդեն իսկ իր նախապատվությունը փոխել է հօգուտ Կիմի կրտսեր որդու: Սեոնգ Չանգի կարծիքով, նույնիսկ վերջին շրջանում կատարված միջուկային ստորգետնյա պայթեցումներն ու հրթիռների արձակումները նպատակ ունեն «անձնական հաջողությունների կույս» առաջացնելու երիտասարդ առաջնորդի օգտին:

Մյուս կողմից, ըստ CNN-ի հունիսի 8-ի լրատվության, մարտ ամսին ձերբակալված 2 ամերիկացի լրագրողներ Լորա Լինգն ու Յունա Լին, որոնք մեղադրվում են «լրտեսության թշնամական գործողությունների մեջ» դատապարտվել են 12 տարվա տաժանակիր աշխատանքի:

Հ. Ծ.



# 43 տոկոս մասնակցություն Եվրոխորհրդարանի ընտրություններին



**Եվրոմիության տարբեր երկրներում կիրակի օրը անցկացված Եվրոխորհրդարանի ընտրություններին մասնակցել է ընտրողների ընդամենը 43 տոկոսը: Դա աննախադեպ ցածր ցուցանիշ է: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հիշեցնում է, որ նախորդ ամենացածր ցուցանիշը գրանցվել էր 2004-ի ընտրություններում՝ 45,5 տոկոս:**

**Նախնական կանխատեսումների համաձայն, խորհրդարանի 736 տեղերի մեծ մասը ստանալու է Եվրոպայի ժողովրդական կուսակցությունը, որի խմբակցությունը միավորում է Եվրոմիության աջ կենտրոնամետ կուսակցություններին: Ենթադրվում է, որ այդ կուսակցությունը կստանա 268 տեղ: Եվրոպացի սոցիալիստների ձախ կենտրոնամետ կուսակցությունները հավանաբար կունենան 170 տեղ:**

**Եվրոպայի լիբերալ-դեմոկրատների դաշինքը, ըստ երեւույթին, կստանա 81 տեղ, «կանաչները»՝ 54 տեղ:**

**Հունիսի 7-ին Եվրոխորհրդարանի ընտրություններ անցկացվում էին Եվրոմիության 27 երկրներից 19-ում: Գերմանիայում, Ֆրանսիայում եւ Իտալիայում հաղթանակ են տարել կառավարող կուսակցությունները: Իսպանիայում կառավարող Սոցիալիստական բանվորական կուսակցությունը պարտվել է. հաղթել են պահպանողականները՝ 42 տոկոս: Կառավարող ուժերը պարտվել են նաեւ Հունաստանում եւ Սլովենիայում:**

# Արժութային միություն Պարսից ծոցում

**Պարսից ծոցի 4 պետությունների՝ Քուվեյթի, Բահրեյնի, Քաթարի եւ Սաուդյան Արաբիայի արտգործնախարարները համաձայնագիր են ստորագրել տարածաշրջանի պետությունների արժութային միություն հիմնելու մասին: Ֆրանսպրեսը նշում է, որ այսպիսով միավորվել են Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի 6 պետություններից 4-ը: Ավելի վաղ արժութային միության անդամ դառնալուց հրաժարվել էին Օմանը եւ Արաբական Միացյալ Էմիրությունները:**

**Նորաստեղծ միության վարչական կենտրոնը գտնվում է Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Էր Ռիադում:**

# Համեմատելով «Տիտանիկի» ողբերգության ... 



**Անգլիական «Դեյլի թելեգրաֆ» թերթի թղթակիցները խոսքի դեգի մեջ ասեղ փնտրելուն են նմանեցրել Ատլանտյան օվկիանոսում հունիսի 1-ին կործանված ֆրանսիական ավիաընկերության բեկորների որոնումները, համեմատելով դրանք մոտ հարյուր տարի առաջ խորտակված «Տիտանիկի» հետ: Նրանց տվյալներով, օդանավում եղած 32 ազգությունների 228 քաղաքացիներից 6-ը բրիտանացիներ են եղել, 5-ը՝ իռլանդացիներ: Եղել են նաեւ առնվազն 7 երեխաներ եւ մեկ նորածին:**

**Իռլանդացիներից 3-ը երիտասարդ բժշկուհիներ են եղել, որոնք միասին են սովորել Դուբլինում: Իթնի Ուոլշը՝ 29 տարեկան, աշխատել է Դուբլինի աչքի եւ ականջի հիվանդանոցում: Եղել է նաեւ առաջնակարգ պարուհի եւ հանդես եկել Բրոդվեյում: Բրազիլիա է այցելել դոկտ. Այլինգ Բասլերի (26 տարեկան) եւ դոկտ. Ջեյն Դիզիի հետ (27 տարեկան):**

**Բրիտանացիներից 2-ը նավթագործներ են եղել, որոնք երկար բացակայությունից հետո էին վերադառնում իրենց կանանց մոտ. Արթուր Քոկլին, 61 տարեկան, երեք զավակների հայր, եւ Գրահամ Գարդները՝ 52 տարեկան:**

**Իսպանուհի Աննա Նեգրա Բարաբեյգը՝ 28 տարեկան, իր ամուսնու՝ Խավիեր Ալվարեզի հետ մեղրամիսն անցկացնելուց հետո ֆրանսիական աերոբուսով Եվրոպա է մեկնել մի քանի ազգականների հետ հանդիպելու նպատակով, մինչ ամուսինը մեկ այլ ինքնաթիռով վերադարձել է Դուբայ, իրենց նոր «բույնը»:**

**Ըստ լրատվության՝ մասնագետները չեն բացառում, որ աղետը տեղի է ունեցել մի քանի պատճառների միաժամանակյա զուգադիպության հետեւանքով: Դրանց թվում նշում են անսովոր ուժեղ քամին, էլեկտրականության խափանումը, ինքնակառավարման եւ թռիչքի ղեկավարման համակարգիչների խանգարումները, ինչպես նաեւ օդաչուների խցիկում ջերմաստիճանի տատանումները: Սկզբնական շրջանում բացառված ահաբեկչության վարկածը դարձյալ շրջանառության մեջ է մտել: Ֆրանսիայի պաշտպանության նախարար Էրվե Մորինի կարծիքով՝ «բոլոր հնարավորությունները պետք է հաշվի առնվեն»:**

**Ըստ CNN-ի ամերիկյան նավատորմի անձնակազմեր եւս սկսել են մասնակցել որոնման աշխատանքներին:**

Հ. Ծ.

# Թբիլիսիում բացվեց Սայաթ-Նովային նվիրված հուշակոթողը

Ամռան առաջին կիրակի օրը Թբիլիսիի հայկական Սուրբ Գեւորգ եկեղեցու շրջակայքը մարդաշատ էր: Եկեղեցու բակում փակցված էր Սայաթ-Նովայի մեծադիր նկարը, իսկ աշուղի գերեզմանին թարմ ծաղիկներ էին դրված: Մարդիկ շտապում էին եկեղեցուն հարող հրապարակը, ուր բացվելու էր Սայաթ-Նովային նվիրված հուշակոթողը:



Նախորդ տարի Հայաստանի եւ Վրաստանի նախագահները տեղադրեցին հուշակոթողի հիմնաքարը: Մագաղաթին միահյուսված սազի ու նռնենու տեսք ունեցող հուշակոթողը քանդակագործներ Գիա Ջափարիձեի եւ Կախա Կորիձեի աշխատանքն է: Քանդակագործները պատմում են, որ իրենց աշխատանքի բարդագույն հատվածը քանդակի տեսքն ու ձեւը որոշելն էր:

«Երկու ամիս շարունակ մենք ուսումնասիրում էինք Սայաթ-Նովայի պահպանված ձեռագրերը: Մեզ առավել հետաքրքրեց նրա ստեղծագործություններից մեկը: Արխիվում պահպանվում էր Սայաթ-Նովայի ձեռագրերից մեկը: Այն բանաստեղծություն է սիրո մասին, որի հատվածներից յուրաքանչյուրը վրացերեն տառերով գրված էր չորս լեզուներով՝ հայերեն, վրացերեն, պարսկերեն եւ ադրբեջաներեն: Բացի այդ, բանաստեղծը ձեռագրի վրա պատկերել էր իր դիմանկարը: Մենք որոշեցինք քանդակել այդ ձեռագիրը: Հուշակոթողի վրա քանդակված է Սայաթ-Նովայի այդ բանաստեղծությունը՝ աշուղի ձեռագրով», ասում է քանդակագործ Կախա Կորիձեն:

Համահեղինակ **Գիա Ջափարիձեն** ասում է, որ Սայաթ-Նովայի այդ ձեռագիրը քանդակելու նպատակը աշուղի՝ համամարդկային արժեքներ կերտելու առաքելության ցուցադրումն էր: «Հուշակոթողի երկու հատվածներին եւս աշուղի տողերն ենք քանդակել: Մի հատվածին հայերեն լեզվով է, մյուսին՝ վրացերեն», նկատում է Գիա Ջափարիձեն:

Հովհաննես Թումանյանի եւ Գեւորգ Բաշինջաղյանի նախաձեռնությամբ արդեն շուրջ մեկ դար է, ինչ մայիսի վերջին կիրակի օրը նշվում է վարդատոնը՝ նվիրված Սայաթ-Նովայի մեծարմանը: Այս տարի տոնը նշվեց մեկ շաբաթ ուշացումով՝ այն համատեղելու հուշակոթողի բացման հետ:

Հրապարակում տեղադրված բեմից երիտասարդները ներկաների վրա վարդի թերթիկներ էին շաղում՝այսպիսով ազդարարելով տոնի սկիզբը: Ելույթ էին ունենում ինչպես վրացի, այնպես էլ հայ ստեղծագործողները:

«Թեպետ հուշակոթողին գրված է Թբիլիսցի աշուղ Սայաթ-Նովա, բանաստեղծը մեր ժողովրդի համար նա վիթխարի արժեք է, որով հպարտանում ենք եւ դաստիարակվում», ասաց Հայաստանի գրողների միության նախագահ **Լեւոն Անանյանը**:

«Արդեն մեկ դար է, ինչ Սայաթ-Նովայի մեծարման տոնը միավորում է երկու ժողովուրդներին: Այս հուշակոթողը մեր երկու ժողովուրդների դարավոր բարեկամության եւս մեկ խորհրդանիշն է: Սայաթ-Նովան ստեղծագործում էր տարբեր լեզուներով՝ ապացուցելով, որ մեր տարածաշրջանի ժողովուրդների միջեւ տարբերություններն ավելի քիչ են, քան ընդհանրությունները», ասաց Հայաստանի արտաքին գործերի նախարար **Էդվարդ Նալբանդյանը**, ով իր վրաց գործընկերոջ հետ մասնակցում էր հուշակոթողի բացմանը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ
Թբիլիսի

# Ավարտվեց Հայաստանում Բուլղարիայի տարվա միջոցառումների առաջին փուլը



**«Ազգն»** իր ընթերցողներին տեղեկացրել էր, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ Բուլղարիայի Հանրապետության նախագահ Գեորգի Պիրվանովի կողմից հայտարարվել էր փոխադարձ մշակույթի տարիներ անցկացնելու մասին: Եվ 2008-ի դեկտեմբերին ՀՀ մշակույթի նախարարը Սոֆիա այցի ընթացքում երկու երկրների նախարարների ստորագրությամբ կյանքի կոչվեց պայմանավորվածությունը: Մայիսի 29-ից հունիսի 4-ը Երեւանում, Գյումրիում, Դիլիջանում, Վանաձորում եւ Արմավիրում Բուլղարիայի տարվա շրջանակներում հրաշալի համերգներով ու ելույթներով հանդես եկան «Սոֆիայի մենակատարներ» նվագախումբը, «Արաբեսկ» բալետային խումբը, «Բիստրիշկիտե բաբի» (Տատիկները Բիստրիցայից) համույթը, «Նայդեն Կիրով» ազգագրական պարի թատրոնը: Այդ օրերին բացվեց նաեւ Բուլղարիայի վանքերը եւ սրբավայրերը լուսանկարչական ցուցահանդեսը, կայացավ Պ. Յավորովի բանաստեղծությունների հայերեն գրքի շնորհանդեսը: Երեկ վերջին գալա-համերգով, որը տեղի ունեցավ Հ. Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի շենքում, ավարտվեց բուլղարական տարվա միջոցառումների առաջին փուլը: Բուլղարացիները անջնջելի տպավորություններն ու հիացմունքի արտահայտությունները կիսեցին **«Ազգի»** հետ հրաժեշտից առաջ: Իսկ Բուլղարիայի մշակույթի նախարարի տեղակալ Իվան Տակաջիեւը մի փոքր նեղվել էր, որ Երեւանում իրենց խմբերի մասին գովազդը շատ քիչ էր ու դահլիճները լեփլեցուն չէին, ինչպես մարզերում: Սակայն դա նրանց բոլորովին չէր ընկճել, որպեսզի հրաշալի ելույթներ ունենային: «Մենք մեզ շատ լավ էինք զգում, կարծես եղբայրներ լինեինք: Ջերմ ու հյուրասեր են հայերը եւ դա շատ ոգեւորիչ է: Աշնանը կրկին կլինեն հյուրախաղեր նաեւ ցուցահանդես Հայաստանում, իսկ հաջորդ տարի կսպասենք Հայաստանի տարի Բուլղարիայում միջոցառումներին, որոնց շուրջ բանակցությունները վերջնական լուծում ստացան այս այցի ընթացքում»: «Բիստրիցայի տատիկներ» համույթի ելույթը այնքան էր գրավել հանդիսատեսին, որ չէին դադարում երկարատեւ ծափերն ու ողջույնի խոսքերը: Այդ համույթում երգողները երեք սերունդ էին ներկայացնում՝ տատ ու թոռ (16 հոգի) 55-80 տարեկան, որոնք հնչեղ ձայներով ու կատարողական բարձր արվեստով ներկայացրին մյուս համույթների հետ բուլղարական էթնիկ երգն ու պարը:



ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# Բառը՝ սկիզբ

Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում վերջերս բանաստեղծուհի, մանկագիր Նաիրա Համբարձումյանի «Ես բառ եմ դարձել» բանաստեղծությունների նոր ժողովածուի շնորհանդեսն էր: «Մի քանի տարի առաջ, երբ լույս տեսավ Նաիրա Համբարձումյանի «Կանաչ կառքեր» գիրքը, նրան առաջաբան գրել է հայտնի գրականագետ Սեւակ Արզումանյանը, հայտնելով այն միտքը, որ ինքը «տեսնում է բանաստեղծին», եւ նա չսխալվեց», իր ողջույնի խոսքում ասաց Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը: Նրա համոզմամբ, ներկա ժողովածուն հաստատեց Սեւակ Արզումանյանի խոսքը. Հեղինակը շատ հուզական անհատականություն է՝ խոհականի զուգորդմամբ, ինքնատիպ, առանձնահատուկ, ժամանակակից մտածողությամբ: Նրա ստեղծագործություններում կա բառի գեղագիտություն, կա հոգու ներդաշնակություն:

ՀԳՄ նախագահը նաեւ ներկաներին տեղյակ պահեց, որ Համբարձումյանը օրերս համալրել է ՀԳՄ շարքերը: Նաիրա Համբարձումյանի բանաստեղծուհուն լավագույնս ներկայացրեց բանաստեղծ Արտաշես Արամը՝ արժեւորելով բանաստեղծական նյութի մաքրությունը, այն, որ բանաստեղծուհին գրական աշխարհում հաստատեց իր բառը, բերեց իր ուրույն ձեռագիրը. «Երբ քեզանից հետո եկող սերունդը ասելիք ունի, դա արդեն ուրախացնող հանգամանք է»:

Բանաստեղծուհի Գոհար Գալստյանի կարծիքով, նրա տողերում առկա է ժամանակների ճիշտ զգացողությունը: Արեւշատ Ավագյանը, գրականագետ Լյուդվիգ Կարապետյանը, արձակագիր Արմեն Մարտիրոսյանը, «Գառնի» ամսագրի խմբագիր Վարուժան Այվազյանը, «Աղբյուր» ամսագրի խմբագիր Թադեւոս Տոնոյանը ողջունեցին Նաիրա Համբարձումյան բանաստեղծուհու մուտքն ու հաստատուն ընթացքը, որը նոր գույն է ավելացնում գրական աշխարհում:

Նաիրա Համբարձումյան բանաստեղծուհու խոհական հույզերի մեջ մտքի զգայական թռիչք եւ փիլիսոփայություն կա, կյանքի եւ մահվան առեղծվածը բացահայտելու, բարու եւ չարի, սիրո եւ ատելության իրական գույները տեսնելու կենսական ճանապարհին: Շոշափելի իրականության մեջ նա փորձում է իր ստեղծած կերպարի մեջ դնել յուրօրինակ




զգացողությունների իր անհատական ոգեշնչումը, յուրաքանչյուր թփից ու ծաղկից ճառագող սերն ու նվիրումը: Եվ այդ սերն է, որ նրա հոգում ծնել է անվերջ լույսի ճանապարհ:

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Համբարձումյանը բանաստեղծական երեք ժողովածուների, «Կանաչուկը» մանկապատանեկան գրքի, «Մարո Մարգարյանի քնարերգությունը» մենագրության, երեք տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է:

ԱՐՓԻՆԵ ԱՄԼԱՆՅԱՆ

# «Վաղնջագույն պետական կազմավորումները Հայկական լեռնաշխարհում»

Վերջին 10-15 տարիներին Հայաստանի տարածքում կատարված պեղումների արդյունքում հնագիտական նոր, հարուստ նյութ է կուտակվել՝ հապացույց Հայկական լեռնաշխարհում վաղնջական ժամանակներում պետական միավորումների գոյության:

Եղած նյութերի եւ տեղեկությունների պարզաբանման նպատակով «Ծիրանի» հասարակական կազմակերպությունը քննարկում-բանավեճ է նախաձեռնել, որը տեղի կունենա հունիսի 13-ին Տպագրիչների 9 հասցեում: Քննարկման թեման է՝ «Վաղնջագույն պետական կազմավորումները Հայկական լեռնաշխարհում՝ ըստ հնագիտական տվյալների», այն կներկայացնի Հայաստանի ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Պավել Ավետիսյանը:

Ն. Պ.

# Հայտնաբերվել է Ագաթա Քրիստիի անհայտ երկու պատմվածք



Ագաթա Քրիստիի երկու անհայտ պատմվածքների սեւագրեր է հայտնաբերել բրիտանացի ուսումնասիրող Ջոն Կառանը՝ դետեկտիվի թագուհուն պատկանած Greenway House առանձնատնից: Պատմվածքներն Էրքյուլ Պուարոյի մասին են: Դրանցից մեկը կոչվում է «Շան գնդակի գաղտնիքը», մյուսը՝ «Ցերբերի սանձահարումը»: Ինչպես հաղորդում է The Gardian-ը, այս պատմվածքներից առաջինը հիմք է հանդիսացել «Համր վկան» վեպի համար, իսկ երկրորդը՝ «Հերակլեսի սխրանքները» պատմվածաշարը պետք է եզրափակեր:

Երկու պատմվածքներն էլ կտպագրվեն 2009-ի սեպտեմբերին՝ Ջոն Կառանի խմբագրմամբ:

Ն. Պ.



# Նինո Անանիաշվիլին հրաժեշտ կտա ամերիկյան բեմին

Աշխարհահռչակ պարուհի Նինո Անանիաշվիլին հունիսի 27-ին Քեվին Մաքքենզիի բեմադրությամբ Չայկովսկու «Կարապի լճում» Օդետ-Օդիլի պարով հրաժեշտ կտա Ամերիկայի բալետի թատրոնին, որտեղ հանդես է եկել 17 տարի: Այս մասին հաղորդում է «Նյու Յորք թայմսը»: Անանիաշվիլին, որ ծնվել է 1964 թվականին Թբիլիսում, բալետային արվեստում հաջողությունների է հասել վաղ տարիքում եւ որպես աշխարհահռչակ պարուհի 2004 թվականից Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի հրավերով ղեկավարում է Թբիլիսիի Զախարիա Պալիշվիլու անվան բալետի թատրոնը:

Ն. Պ.

AZG NEW 7.QXD  6/8/2009  9:30 PM  Page 1



ԱԶԳ **Մարզական**

# Ընտրական մրցաշարը սկսեցին պարտությամբ

## *Այսօր կկայանա Հայաստան-Թուրքիա սկզբունքային մրցավեճը*



Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը պարտությամբ սկսեց Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարը: Շվեյցարիայի Վիլ քաղաքի «Բերգհոլց» մարզադաշտում հայ ֆուտբոլիստները 1-2 հաշվով զիջեցին դաշտի տերերին:

Ըստ ՀՖՖ մամուլի քարտուղարության, հանդիպման առաջին խաղակեսն անցել է դաշտի տերերի առավելությամբ, որոնք արդեն 20-րդ րոպեին խաղը շահում էին 2-0 հաշվով: Հաշիվը 17-րդ րոպեին բացել էր Էրեն Դերդիյոկը, երեք րոպե անց Շկելզեն Գաշին 2-րդ անգամ էր գրավել Էդուարդ Հովհաննիսյանի պաշտպանած դարպասը:

ՀՀ հավաքականի հիմնական հարվածային ուժը՝ Մխիթարյան-Գոհարյան երկյակը ակտիվ է իրեն դրսեւորել: Առաջին լուրջ վտանգը դաշտի տերերի դարպասին ստեղծվել է 27-րդ րոպեին, սակայն Մխիթարյանի հարվածից հետո գնդակը դիպել է դարպասաձողին: Իսկ մինչ այդ դաշտի տերերը կարող էին նաեւ 3-րդ գոլը խփել, սակայն դատարկ դարպասից գնդակը հանել է Կառլեն Մկրտչյանը:

Ընդմիջումից հետո մեր ֆուտբոլիստները զգալիորեն ակտիվացրել են հարձակողական գործողությունները: 48-րդ րոպեին Գոհարյանի փոխանցումով հարվածային դիրք դուրս եկած Մխիթարյանի հարվածից հետո դաշտի տերերին օգնության է եկել դարպասի հորիզոնական ձողը: Ի վերջո, մեր հավաքականի գրոհները ցանկալի արդյունք են տվել: 83-րդ րոպեին Մխիթարյանը հեռահար հարվածով կրճատել է հաշվի տարբերությունը: 4 րոպե անց դաշտից 2-րդ դեղին քարտի համար հեռացվել է Միհրան Մանասյանը:

Շվեյցարացիների հետ խաղում ՀՀ հավաքականը հանդես է եկել հետեւյալ կազմով. Էդուարդ Հովհաննիսյան, Արտակ Անդրիկյան, Գագիկ Դաղբաշյան, Կարեն Խաչատրյան, Կառլեն Մկրտչյան, Արթուր Յուզբաշյան, Արտակ Դաշյան, Էդգար Մալաքյան (Գեւորգ Ղազարյան, 46), Դավիթ Մանոյան (Միհրան Մանասյան, 80), Հենրիխ Մխիթարյան, Հովհաննես Գոհարյան:

Նշենք, որ խաղին մասնակցած 13 ֆուտբոլիստներից 10-ը ներկայացնում էին «Փյունիկը», 2-ը՝ «Բանանցը», մեկը՝ Բելառուսի ԲԱՏԷ-ն:

Այսօր Հայաստանի երիտասարդական հավաքականը «Հանրապետական» մարզադաշտում կհյուրընկալի ընտրական մրցաշարի առաջատարներից մեկին՝ Թուրքիայի հավաքականին, որը դեռեւս մարտին հյուրընկալվելիս 3-0 հաշվով հաղթել էր իռլանդացիներին: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 20-ին: Հիշեցնենք, որ անցյալ տարվա օգոստոսի 20-ին «Հրազդանում» մեր երիտասարդները 2-1 հաշվով կամային հաղթանակ էին տոնել թուրքերի նկատմամբ: 89-րդ րոպեին հաշիվը հավասարեցրեց Կառլեն Մկրտչյանը, իսկ ավելացված ժամանակում թիմին հաղթանակ պարգեւեց Հենրիխ Մխիթարյանը: Հաջողություն մաղթենք մեր ֆուտբոլիստներին թուրքերի հետ սկզբունքային մրցավեճում:

# Հոլանդիան առաջինը եզրափակիչի ուղեգիր նվաճեց



Հոլանդիայի ազգային հավաքականը հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթելով իսլանդացիներին, աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց եւ եվրոպական հավաքականներից առաջինը եզրափակիչի ուղեգիր նվաճեց: «Վեց անընդմեջ հաղթանակներն իրենք մեծ գնահատանքի են արժանի: Մենք կատարեցինք մեր գլխավոր խնդիրը եւ այժմ ամբողջ մեկ տարի ունենք աշխարհի առաջնությանը նախապատրաստվելու համար: Նպատակադրվել ենք մնացած երկու ընտրական խաղերն էլ շահել, որպեսզի 100 տոկոսանոց արդյունքով ավարտենք մրցաշարը», խաղից հետո նշել է հոլանդացիների գլխավոր մարզիչ Բերտ Վան Մարվեյկը:

Վերջնական հաղթանակին մոտ է նաեւ Անգլիայի հավաքականը, որը եւս 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ հյուրընկալվելիս 4-0 հաշվով ջախջախելով ղազախներին: Անգլիացիներից գոլերը խփեցին Բերին, Հեսկին, Ռունին եւ Լեմփարդը: Ընտրական 2-րդ խմբում 11 միավորով 2-րդ տեղում են խորվաթները, որոնք սեփական հարկի տակ ոչ-ոքի (2-2) խաղացին ուկրաինացիների հետ: Բելառուսները 5-1 հաշվով հաղթելով Անդորրայի ընտրանուն, 9 միավորով 3-րդ տեղում են:

Առաջին խմբում առաջատարի դիրքն ամրապնդեց Դանիայի ընտրանին՝ հյուրընկալվելիս 1-0 հաշվով առավելության հասնելով շվեդների նկատմամբ: 6 խաղից հետո դանիացիներն ունեն 16 միավոր: Պորտուգալացիները հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթելով ալբանացիներին, վաստակեցին 9 միավոր:

Ամենախոշոր հաշիվը (7-0) գրանցվեց Սլովակիայի եւ Սան Մարինոյի հավաքականների մրցավեճում: Մյուս հանդիպումներում գրանցվել են այսպիսի արդյունքներ. Ֆինլանդիա-Լիխտենշտեյն՝ 2-1, Ադրբեջան-Ուելս՝ 0-1, Սերբիա-Ավստրիա՝ 1-0, Լիտվա-Ռումինիա՝ 0-1, Բուլղարիա-Իռլանդիա՝ 1-1, Կիպրոս-Չեռնոգորիա՝ 2-2, Մակեդոնիա-Նորվեգիա՝ 0-0:

## Երկու խաղում մեկ գոլ

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 11-րդ տուրում ընդամենը երկու խաղ կայացավ: Գյումրիում «Շիրակի» եւ «Ուլիսի» մրցավեճում դարպասները մնացին անառիկ, իսկ Կապանում «Գանձասարը» Վիրգին Մարշավելայի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեց «Կիլիկիային»:

## Անանդը շահեց մրցախաղը

Վիշվանաթան Անանդը հաղթող ճանաչվեց Միշկոլցում Պետեր Լեկոյի հետ 8 պարտիայից անցկացրած արագ շախմատի մրցաշարում (5-3): Ավարտական չորս պարտիաներից մեկում Անանդը հաղթեց, երեքն ավարտեց ոչ-ոքի: Իսկ ահա Լեկոն այդպես էլ չվայելեց հաղթանակի քաղցրությունը:

ՇԱԽՄԱՏ

# Վարուժան Հակոբյանը Լաս Վեգասի մրցաշարի հաղթող

ԱՄՆ-ում բնակվող գրոսմայստեր Վարուժան Հակոբյանը հաղթող ճանաչվեց Լաս Վեգասի շախմատի մրցաշարում, որին մասնակցում էին 89 շախմատիստներ: Նա 6 հնարավորից վաստակեց 5 միավոր: Նույնքան միավոր ուներ նաեւ Էնրիկո Սեւիլանոն, որին Հակոբյանը գերազանցեց լրացուցիչ գործակիցներով: Երկուսն էլ որպես պարգեւ ստացան 4641 դոլար:

Առաջին տուրում Հակոբյանի օգտին միավոր գրանցվեց առանց խաղի: Նա հաղթեց Ջոնաթան Թայարին, Ջես Կրային եւ Լաուրենս Ֆրեսինեին, ոչ-ոքի խաղաց Մարկ Բրադֆորդի եւ Լյուկ վան Վելիի հետ:

Հայաստանը ներկայացնող Գաբրիել Սարգսյանն ու Տիգրան Պետրոսյանը 6 հնարավորից վաստակեցին 4,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով Գաբրիելը գրավեց 4-րդ, Տիգրանը՝ 5-րդ տեղը՝ իրենցից առաջ թողնելով նույնիսկ ցուցանիշ ունեցող Լյուկ վան Վելիին: Մեր շախմատիստների պարգեւը 413 դոլար է: 4,5 միավորով 14-րդ տեղը զբաղեցրեց ԱՄՆ-ում բնակվող Անդրանիկ Մատիկոզյանը, իսկ ԱՄՆ-ն ներկայացնող մեկ այլ հայազգի շախմատիստ՝ Գարուշ Մանուկյանը 2,5 միավորով գրավեց 43-րդ հորիզոնականը:

# Հաջող մեկնարկ

Թբիլիսիում ընթացող շախմատի Մայա Չիբուրդանիձեի անվան գավաթի խաղարկությունում հաջող են մեկնարկել Հայաստանի 3 շախմատիստուհիները: Լիլիթ Գալոյանը, Լիլիթ Մկրտչյանն ու Սիրանուշ Անդրեասյանը 3 հնարավորից վաստակել են 2,5-ական միավոր: 100 տոկոսանոց արդյունքով առջեւից են ընթանում վրաց շախմատիստուհի Բելա Շոթենաշվիլին եւ ուկրաինացի Մարիա Մուզիչուկը: Մրցաշարին մասնակցում են 53 շախմատիստուհիներ:

# Չորսի մրցաշարում ուժեղագույնը Կառլսենն էր

Իտալական Լեոն քաղաքում 4 գրոսմայստերների մասնակցությամբ անցկացված արագ շախմատի մրցաշարի հաղթող ճանաչվեց Մագնուս Կառլսենը: Մրցաշարն անցկացվեց նոկաուտ համակարգով: Մրցակիցները 4 պարտիայից բաղկացած մրցախաղում պետք է որոշեին հաղթողին: Ոչ-ոքի արդյունքի դեպքում նշանակվում էր լրացուցիչ կայծակնային մրցախաղ:

Կիսաեզրափակիչում Վասիլի Իվանչուկը 2,5-1,5 հաշվով պարտության մատնեց Ալեքսանդր Մորոզեւիչին, իսկ Մագնուս Կառլսենը առավելության հասավ Վան Յուեյի նկատմամբ (3,5-2,5): Եզրափակիչում հաղթողին որոշելու համար հարկ եղավ անցկացնել կայծակնային լրացուցիչ 3 պարտիա: Համառ պայքարում Կառլսենը 4-3 հաշվով հաղթեց Իվանչուկին:

# Ֆեդերերը կրկնեց Սամփրասի ռեկորդը



Փարիզում վերջնագիծը հասեց թենիսի «Ռոլան Գարոսի» մրցաշարը: Տղամարդկանց մրցաշարի եզրափակիչում հաղթելով շվեդ Ռոբին Սոդերլինգին (6-1, 7-6, 6-4), շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը «Մեծ սաղավարտի» մրցաշարերում իր 14-րդ հաղթանակը տոնեց եւ կրկնեց լեգենդար ամերիկացի թենիսիստ Փիթ Սամփրասի ռեկորդը: Ընդ որում, Ֆեդերերին առաջին անգամ հաջողվեց հաղթող ճանաչվել Ֆրանսիայի բաց առաջնությունում: Հետաքրքրական է, որ Փիթ Սամփրասն այդպես էլ «Ռոլան Գարոսում» հաջողության չի հասել, իսկ Իվան Լենդլին չի հաջողվել դառնալ ուիմբլդոնյան մրցաշարի հաղթող:

«Պատրաստ եմ նույնիսկ իմ սիրած ուիմբլդոնյան մրցաշարը զոհաբերել հանուն «Ռոլան Գարոսի» հաղթանակի: Հատուկ պատրաստություն պետք է անցնեմ հողածածկույթով կորտերում, որպեսզի Փարիզում գերազանց մարզավիճակում գտնվեմ», նշել էր Ֆեդերերը 2008-ի փետրվարին Սանկտ Պետերբուրգում «Լաուրեսի» մրցանակին արժանանալուց հետո:

Նրա երազանքի իրականացմանը վերջին տարիներին խանգարում էր իսպանացի Ռաֆայել Նադալը: 2006-ից սկսած եզրափակիչում Նադալը հաղթել է Ֆեդերերին: Եվ ահա այս անգամ շվեդ Սոդերլինգին հաջողվեց պայքարից դուրս մղել Նադալին եւ փաստորեն եզրափակիչի ուղին հարթել Ֆեդերերի համար, որը հաղթող ճանաչվելու ստեղծված հնարավորությունը ձեռքից բաց չթողեց:

Ֆեդերերին գլխավոր մրցանակը հանձնեց լեգենդար Անդրե Աղասին, նշելով, որ շվեյցարացին արժանի էր հաղթանակի: Իր հերթին Սոդերլինգը Ֆեդերերին համարում է բոլոր ժամանակների աշխարհի լավագույն թենիսիստ: Իսկ Փիթ Սամփրասը նրա մասին հետեւյալ կարծիքն է արտահայտել. «Այն, ինչ վերջին 5 տարիներին արեց Ֆեդերերը, դժվար թե մոտ ապագայում որեւէ մեկին հաջողվի: Անկախ այս մրցաշարի արդյունքներից, Ֆեդերերը բոլոր ժամանակների ամենաանվանի թենիսիստն է: Նա իրոք արժանի էր հաղթանակին: Նա ոչ միայն հիանալի մարզիկ է, այլեւ հարգանքով է վերաբերվում իր աշխատանքին: Ռոջերը դրականորեն է ազդում երիտասարդության վրա: Վստահ եմ, որ առջեւում նրան նոր հաղթանակներ են սպասում»:

Կանանց եզրափակիչը մաքուր ռուսական էր: Հաղթող ճանաչվեց Սվետլանա Կուզնեցովան՝ 6-4, 6-2 հաշվով առավելության հասնելով Դինարա Սաֆինայի նկատմամբ: «Մեծ սաղավարտի» մրցաշարերում դա Կուզնեցովայի 2-րդ մրցանակն էր: Առաջինը նա շահել էր 2004-ին ԱՄՆ-ի բաց առաջնությունում: Իսկ Սաֆինան 2-րդ տարին անընդմեջ պարտվեց «Ռոլան Գարոսի» եզրափակիչում: Հաղթողին մրցանակը հանձնեց Շտեֆի Գրաֆը, որը մեկ անգամ չէ, որ վայելել է հաղթանակի բերկրանքը Փարիզում:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Ծանուցում

## ՍՏԱՑԻ՛Ր ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՉԼՔԵՌՆԱԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ...

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE




Հայաստանում ֆրանսիական համալսարանը հայտարարում է ընդունելություն բակալավրիատի կրթական ծրագրով 2009-2010 ուսարվա համար հետեւյալ ֆակուլտետներում՝

- **Առեւտուր եւ մարքեթինգ**
- **Կառավարում**
- **Իրավունք**

Ուսումառության ավարտին ուսանողները ստանում են ֆրանսիական եւ հայկական պետական նմուշի դիպլոմներ եւ կարող են ուսումը շարունակել բուհի մագիստրատուրայում:

**Հայտերն ընդունվում են 2009 թ. հունիսի 11-ից հուլիսի 11-ը ժամը 10.00-ից մինչեւ 17.00:**

*Ներկայացվող փաստաթղթեր.*

- Միջնակարգ կրթության վկայական (բնօրինակը կամ պատճենը),
- 3x4 չափի մեկ լուսանկար,
- Անձնագրի կամ ծննդյան վկայականի բնօրինակը եւ պատճենը (ծննդյան վկայականի դեպքում՝ նաեւ տեղեկանք բնակության վայրից եւ անձը հաստատող փաստաթուղթ լուսանկարով),



- Զինվորական հաշվառման վկայականը,
- Գործերի ընդունման համար վճարի անդորրագիրը (մեկ ֆակուլտետ դիմելու դեպքում գործերի ընդունման վճարը կազմում է 7200 դրամ, միաժամանակ երկու ֆակուլտետ դիմելու դեպքում՝ 9600 դրամ):

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

*Հայաստանում ֆրանսիական համալսարան*
*0037 ք. Երեւան, Դավիթ Անհաղթի 10:*
*Հեռ.՝ 24 96 45 Էլ. փոստ՝ communication@ufar.am*

## ... ԴԱՐՁԻ՛Ր ՎԱՂՎԱ ՂԵԿԱՎԱՐԸ

---

«ՖԼՈՐԵՍ» աճուրդի տուն ՍՊԸ-ն «Ադամանդ» ԵԱՀ բորսայի հարթակում իրականացնելու է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը.

1. Առանձնատուն՝ 151 քմ, հող՝ 0020 հա, խորդանոց՝ 80 քմ, կաթսայատուն՝ 8 քմ, անասնագոմ՝ 78 քմ, ավտոտնակ՝ 40 քմ:
Հասցե՝ գ. Գեղամավան:
Մեկնարկային գինը՝ 2.250.000 դրամ:
2. Վարչական շենք՝ 368.8 քմ: Հասցե՝ ք. Սեւան, Նաիրյան 189:
Մեկնարկային գինը՝ 35.000.000 դրամ:
3. Առանձնատուն՝ 411.30 քմ: Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան:
Մեկնարկային գինը՝ 10.260.000 դրամ:
4. Բնակարան՝ 46 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Անդրանիկի 76 շ., բն. 42:
Մեկնարկային գինը՝ 9.500.000 դրամ:
5. Բնակարան: Հասցե՝ ք. Վայք, Արշ. Մելիքյան 1:
Մեկնարկային գինը՝ 5.600.000 դրամ:
6. Առանձնատուն՝ 143.27 քմ, հողը՝ 0.063 հա: Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն:
Մեկնարկային գինը՝ 13.400.000 դրամ:
7. Բնակարան՝ 53.2 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Մարգարյան 17 շ., բն. 22:
Մեկնարկային գինը՝ 14.300.000 դրամ:
8. Հողամաս՝ 0.084 հա: Հասցե՝ Նոր Խարբերդ, 14 փ., 49:
Մեկնարկային գինը՝ 2.600.000 դրամ:
9. Հող՝ 0.0041 հա, կից շինություն՝ 90.5 քմ: Հասցե՝ ք. Էջմիածին, Կոմիտաս 27 տուն:
Մեկնարկային գինը՝ 14.100.000 դրամ:
10. Բնակարան: Հասցե՝ ք. Երեւան, Դրոյի փ., 5 շ., բն. 17:
Մեկնարկային գինը՝ 14.900.000:
11. Հողամաս՝ 3.0 հա: Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Հանքավան:
Մեկնարկային գինը՝ 3.600.000 դրամ:
12. Ավտոմեքենա՝ «Գազ 3105» մակնիշի, 14 SO 047 պետ. համարանիշի, 2005 թ. արտ.:
Մեկնարկային գինը՝ 3.000.000 դրամ:
13. Բնակարան: Հասցե՝ Արարատի մարզ, ք. Մասիս Ն/Թ 14 շ., բն. 37:
Մեկնարկային գինը՝ 12.100.000 դրամ:
14. Բնակարան՝ 43.53 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Ռուբինյանց փ., 10 շ., բն. 7:
Մեկնարկային գինը՝ 15.700.000 դրամ:
15. Բնակելի տուն՝ 251.6 քմ, հողը՝ 0,10 հա, ավտոտնակ՝ 34.6 քմ, խորդանոց՝ 7,8 քմ, զուգարան՝ 3.5 քմ:
Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Արզնի 10 փ., 28 տուն:
Մեկնարկային գինը՝ 28.600 դրամ:
16. Բնակելի տուն՝ 507.3 քմ, տնամերձ հողամաս՝ 01190 հա: Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Զովք, 13 փ., տ. 40:
Մեկնարկային գինը՝ 85.700.000 դրամ:
17. Բնակարան՝ 35.4 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Ազատության փ., 11 շ., բն. 35:
Մեկնարկային գինը՝ 10.400.000 դրամ:
18. Բնակարան՝ 91.76 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Նորքի 7-րդ զանգ., 9 շ., բն. 22:
Մեկնարկային գինը՝ 19.900.000 դրամ:
19. Բնակարան՝ 81.1 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Շերամի 93 շ.:
Մեկնարկային գինը՝ 19.200.000 դրամ:
20. Խանութ՝ 63.1 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Հր. Քոչար 16/2:
Մեկնարկային գինը՝ 16.000.000 դրամ:
21. Բնակարան՝ 39.6 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի նրբ., 31 շ., 1 ա:
Մեկնարկային գինը՝ 6.000.000 դրամ:
22. Բնակելի տուն՝ 11.3 քմ: Հասցե՝ Արարատի մարզ, Դիմիտրով համայնք:
Մեկնարկային գինը՝ 6.100.000:
23. Բնակարան՝ 80.61 քմ: Հասցե՝ ք. Երեւան, Անդրանիկի 117 շ., բն. 49:
Մեկնարկային գինը՝ 18.500.000 դրամ:
24. Տուն՝ 140.8 քմ, մառան՝ 5.5 քմ, կիսակառույց՝ 30.4 քմ, գոմ՝ 3.1 քմ, թոնրատուն՝ 3.2 քմ պարիսպ:
Հասցե՝ Արարատի շրջ., գ. Շահումյան:
Մեկնարկային գինը՝ 14.000.000 դրամ:
25. Տուն՝ 147.4 քմ, ավտոտնակ՝ 22.8 քմ, հողը՝ 0.3426: Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Ջառ:
Մեկնարկային գինը՝ 21.400 դրամ:
26. Տուն՝ 193.9 քմ: Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն:
Մեկնարկային գինը՝ 21.450.000 դրամ:
27. Բնակարան՝ 113.5 քմ, որից բնակելի՝ 64.40 քմ: Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Նոր Արտամետ:
Մեկնարկային գինը՝ 17.600.000 դրամ:
28. Բնակարան՝ 28.89 քմ: Հասցե՝ ԼՂՊ, ք. Ստեփանակերտ, Մանուկյան փ. 2 շ., բն. 12:
Մեկնարկային գինը՝ 8.000.000 դրամ:
29. Տուն՝ 291.4 քմ, հողը՝ 0.0529 հա: Հասցե՝ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 11/15:
Մեկնարկային գինը՝ 6.500.000 դրամ:
30. Տուն՝ 218 քմ, հնոցը՝ 3.2 քմ, հողը՝ 595 քմ: Հասցե՝ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ղափանցյան 17:
Մեկնարկային գինը՝ 3.000.000 դրամ:
31. Տուն՝ 47.7 քմ, տնտեսական պահեստ՝ 130 քմ, գոմ՝ 108.5 քմ, ծածկոցը՝ 71,3 քմ, հողը՝ 1660 քմ:
Հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Լեռնարտ 5 փ., 1-ին նրբ., 2:
Մեկնարկային գինը՝ 3.500.000 դրամ:
32. Անասնագոմ՝ 792.1 քմ, հարակից հողամաս՝ 2107 քմ: Հասցե՝ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ղ. Փարպեցու փ. կից:
Մեկնարկային գինը՝ 2.500.000 դրամ:
33. Տուն՝ 280.95 քմ, կիսակառույց՝ 18.5 քմ, գոմեր՝ 36.3 եւ 22 քմ, սանհանգույց՝ 2.3 եւ 17 քմ, ծածկարան՝ 4.0 քմ, հողը՝ 0.155 հա:
Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Նոր-Գյուղ:
Մեկնարկային գինը՝ 25.600.000 դրամ:
34. Տուն՝ 182.44 քմ, գոմ՝ 70.41 քմ, թոնրատուն՝ 29.67 քմ, ավտոտնակ՝ 37.4 քմ, հողը՝ 0.12 հա:
Հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Արագած:
Մեկնարկային գինը՝ 20.800.000 դրամ:
35. Բնակարան՝ 60.4 քմ: Հասցե՝ ք. Էջմիածին, Վ. Կոստանյան 8:
Մեկնարկային գինը՝ 7.500.000 դրամ:
36. Գյուղ-արտադր. օբյ. եւ հողամաս՝ 0.4 հա, գոմ, պահակատուն, պահեստ՝ 385.4 քմ: Հասցե՝ Արարատի մարզ, գ. Հովտաշեն:
Մեկնարկային գինը՝ 3.000.000 դրամ:
37. Բնակելի կառույց, հողամաս՝ 0.217 հա, տուն՝ 64.9 քմ, հիմքը՝ 33.6 քմ, ծածկը՝ 8.8 եւ 24.5 քմ:
Հասցե՝ Արարատի մարզ, գ. Սայաթ-Նովա:
Մեկնարկային գինը՝ 3.000.000 դրամ:
38. Տուն՝ 135.5 քմ, հողը՝ 0.1640 հա: Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Գառնի, 3-րդ թաղ. 18:
Մեկնարկային գինը՝ 10.800.000 դրամ:
39. Բնակարան՝ 77.77 քմ: Հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 4-րդ միկր., 10 շ., բն. 7:
Մեկնարկային գինը՝ 4.200.000 դրամ:
40. Խանութ՝ 39.53 քմ, հողը՝ 0.00520 հա: Հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Եղբայրության 3/1:
Մեկնարկային գինը՝ 8.950.000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով 09.07.2009 թ.-ից մինչեւ 30.12.2009 թ., յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 13.00-ից, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:

Տեղեկությունների համար դիմել՝ հեռ. 56-52-28 կամ 56-31-15:

---

## Հայտարարություն

«Երեւանի Գեղարվեստական ժամացույցների գործարան» ԲԲԸ խորհուրդը տեղեկացնում է, որ հունիսի 27-ին, ժամը 11-ին Լ. Լիսինյան 33 հասցեում տեղի կունենա ընկերության տարեկան ժողովը:

Օրակարգ՝

1. Հաշվիչ հանձնաժողովի ձեւավորումը
2. 2008 թ. տարեկան հաշվետվությունը եւ 2008 թ. ֆինանսական հաշվետվություն
3. Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության հաստատում
4. 2009 թ. ընկերության արտադրատնտեսական գործունեության հաստատում
5. Ընկերության խորհրդի կազմի ընտրություն
6. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատում

Ժողովի ժամանակ քննարկվող հարցերի մասին տեղեկություններ կարող եք ստանալ ընկերության հաշվապահությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14-16-ը: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 27.05.2009-ի դրությամբ:

Ժողովի մասնակիցների գրանցումը անցկացվելու է հունիսի 27-ին ժամը 10-11-ը:

Անձը հաստատող փաստաթղթերի առկայությունը պարտադիր է:

Ընկերության 2008-ի աուդիտն իրականացրել է «Երեւան Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ն:

*ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ա. Մինասյան*

*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01. 01. 2009 թ.**

| | | |
|---|---|---|
| | | ծածկագիրը |
| Կազմակերպության անվանումը | **Եր-ի գեղ. ժամ.-ի գործ-ն ԲԲԸ** | |
| Փաստացի գործունեություն հիմնական երկու տեսակները | ժամ-ի արտադրություն | 36911 |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 27812000979 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 00401886 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | Երեւան, Լ. Լիսինյան-33 | հեռ. 559065 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Երեւան, Լ. Լիսինյան-33 | հեռ. 559065 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 402260 | 399104 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | 417 | 482 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 402677 | 399586 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 269683 | 269683 |
| Արագամաշ առարկաներ | 110 | 3319 | 3319 |
| Արտադրանք | 130 | 90494 | 90494 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 12 | 12 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 40020 | 39937 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 983 | 1121 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 1351 | 1108 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 773 | 856 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 406635 | 406530 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 809312 | 806116 |
| **ՊԱՍՍԻՎ** | **տող** | **Նախորդ տարվա վերջին** | **Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին** |
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 303030 | 303030 |
| Վերագնահատումից եւ վերաչափումից տարբերություններ | 260 | - | 241945 |
| Կուտակված շահույթ | 270 | (156219) | (159660) |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում | 290 | 241945 | - |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 388756 | 385315 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | - | 7296 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | - | 7296 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 211355 | 206165 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 208655 | 206647 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 33 | 21 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | - | 26 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 138 | 271 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 375 | 375 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 420556 | 413505 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 809312 | 806116 |

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**2008 թ.,**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Վարչական ծախսեր | 050 | (9177) | (9527) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | (9177) | (9527) |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում | 070 | 8913 | 7679 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | (4557) | (1299) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | (4821) | (3147) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում | 130 | 19288 | (294) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 14467 | (3441) |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 14467 | (3441) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 14467 | (3441) |










ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ՝

---

## Հայտարարություն գնանշման վերաբերյալ

Գեղարքունիքի մարզի Վ. Գետաշեն համայնքի գյուղապետարանը կազմակերպում է գնանշման հարցում.

1. ԳՄՎԳՀ-ԱՇՁԲ-01 ծածկագրով գյուղապետարանի ծառայողական տրանսպորտի համար վառելանյութերի եւ պահեստամասերի ձեռքբերման նպատակով
2. ԳՄՎԳՀ-ԱՇՁԲ-02 խմելու ջրի հին ջրագծի վերանորոգման նպատակով
3. ԳՄՎԳՀ-ԱՇՁԲ-03 Վ. Գետաշեն գյուղի խմելու ջրի ջրամբարի շուրջը կառուցվող մետաղական ցանկապատի նպատակով
4. ԳՄՎԳՀ-ԱՇՁԲ-04 Վ. Գետաշեն գյուղի փողոցների առուների ընթացիկ նորոգման (կիսախողովակների տեղադրում) նպատակով:
5. ԳՄՎԳՀ-ԱՇՁԲ-05 համայնքի տարածքում կոմունալ ծառայություններ իրականացնելու նպատակով:

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է սույն հայտարարության հրապարակման հաջորդ 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով. ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վ. Գետաշենի գյուղապետարան, հեռ. (0262) 4 42 03: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հետո 10-րդ աշխատանքային օրվա ժ. 18.00-ին:

www.
azg.am

«ԱԿՍՈՆ» ԱՀ բորսան 2009-ի հունիսի 16-ից իրականացնելու է 1998-ի արտադրության «Մերսեդես Բենց S 320» օգտագործված մարդատար ավտոմեքենայի աճուրդային վաճառք:

Մեկնարկային գինը՝ 3,000,000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝

Հեռ.՝ 56-45-13 կամ նամակագրել e-mail: sayadyanarmen@rambler.ru

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 8.06.2009, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: